

# ԵՐԱՊԵՏԿԱՆ



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ 2008թ., ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1 (186)



**Ս** Ծննդյան և Աստվածհայտնության տոնը, որը, ի դեպ, կարգել է Ս.Հակոբոս առաքյալը, եղավ տոնների ու հոգևոր ուրախությունների սկիզբը բոլոր հավատացյալների համար: Աստվածորդու մարդկային հմարավոր եղավ մարդու վերականգնումը: Քրիստոս իր փրկագործ տնօրինությամբ մարդկային հոգիների առջև վերստին բացեց երկնքի արքայության դռները: Փրկչի Ծննդյան հոգեմորոգ, աշխարհակեցույց տոնին նախորդում է շաբաթապահքը, որը լուծվում է հունվարի 5-ի երեկոյան՝ Գրագալույցի Ս. Պատարագով: Հունվարի 5-ի երեկոյան Հայ Առաքելական

բոլոր եկեղեցիներում մատուցվեց Գրագալույցի Ս. Պատարագ: Առաջնորդանիստ Ս.Սարգիս եկեղեցում հանդիսապետությամբ գերաշնորհ Ս. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի, Ս. Շահե քահանա Հայրապետյանը մատուցեց Գրագալույցի Ս. Պատարագ: Բազմաթիվ հայորդիներ հաղորդվեցին Տիրոջ Մարմնի և Արյան Ս. Խորհրդին՝ իրենց սրտերում ընդունելով Մանուկ Փրկչին, միավորվելով Նրա հետ, «ով վասն մեր մարմնացավ»: Հնչեց աշխարհի Փրկչի Ծննդյան աշխարհասասան ավետիսը. «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ. մեզ և ձեզ մեծ ավետիս...»: Ս. Պատարագին ներկա էր նաև ՀՀ վարչա-

## ԾՆԱԻ ՆՈՐ ԱՐՔԱՅ Ի ԲԵԹՂԵՅԷՍ ՔԱՂԱՔԻ, ՈՐՈՒՔ ՄԱՐԴԿԱՆ ՕՐՀՆԵՑԷՔ. ԶԻ ՎԱՍՆ ՄԵՐ ՄԱՐՄՆԱՑԱԻ ...

պետ Ս. Սարգսյանը: Ս. Պատարագի ավարտին հավատացյալները իրենց հետ վառված մոմեր տարան, որոնք խորհրդանշում է բեթղեհեմյան աստղը: Հաջորդ օրը՝ հունվարի 6-ին, առաջնորդանիստ եկեղեցում տոնական Ս. Պատարագ մատուցեց գերաշնորհ Ս. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Ներկա էին ԱՅԹ-ի թեմական և ծխական խորհուրդների անդամներ, հյուրեր: Ս. Պատարագի ավարտին Նավասարդ սրբազանը կատարեց ջրօրհնեքի արարողություն՝ ի հիշատակ Քրիստոս Աստծո Մկրտության՝ Աստվածահայտնության, քանզի Ս. Երրորդության խորհուրդը, որ հավիտյան ծածկված էր ամենքից, հայտնվեց Հորդանանում՝ Որդին՝ մկրտվելով, Հայրը՝ ձայնով, իսկ Ս. Հոգին՝ աղավանակերպ իջնաձև: Սրբազան Հայրը Ս. Խաչով և Սրբալույս Մյուռնով օրհնեց ջուրը, որը բաժանվեց ժողովրդին՝ ի բժշկություն հոգևոր և մարմնավոր ախտերի: Այս տարի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու խաչի կն-



քահայրը կրկին Ավետիք Նազարեթյանն էր: Հունվարի 7-ին Տ.Հակոբ քնն. Խաչատրյանը մատուցեց Ս.Պատարագ՝ ի հիշատակ մեռելոց: Պատարագի ավարտին կատարվեց Հոգեհանգստյան կարգ, որից

հետո միայն այցելում են հարագատների շիրիմներին՝ նրանց էլ տանելով Քրիստոսի լույս ծննդյան մեծ ավետիսը. «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ. մեզ և ձեզ մեծ ավետիս»: *Ամենայն հավաստում*

## ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՈՐԱՎԱՐ

**Ա** մենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի տնօրինությամբ Ս. Սարգիս գորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր: Այս տարի այն նշվում է հունվարի 21-ին: Ս. Սարգիս գորավարն իր որդու՝ Մարտիրոսի և 14 քաջ մարտիկների հետ նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի: Արիության համար Ս. Սարգիսը Մեծն Կոստանդիանոս կայսեր (285-337) կողմից կարգվում է իշխան և սպարապետ՝ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում: Նա ոչ միայն գերազանց սպարապետ էր, այլև հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր հոժարությունից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում է մեհյաններ, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեություն: Երբ Հուլիանոս Ուրացողի թագավորության օրոք (360-363) սկսվում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, Ս. Սարգիսը, աստվածային հայտնությամբ հրաման առնելով հեռանալ կայսրության սահմաններից, իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստանի վրա,

Հայոց արքան, ձգտելով իր երկիրը գերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգիսին ծառայության անցնել Շապուհի մոտ: Շապուհը սիրով ընդունում է Ս. Սարգիսին և նշանակում նրան զորագնդերի հրամանատար: Ջորականներից շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայած նվիրումն առ Աստված, իր աղոթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում են հեթանոսությունից և դառնում քրիստոնյա: Սակայն Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը և զոհ մատուցել: Ջորավարն անմիջապես մերժում է այն՝ ասելով. «Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, ով ստեղծել է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերն ի բնե աստվածներ չեն, հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»: Այդ խոսքերից հետո Ս. Սարգիսը կործանում է բազիլը: Ջայրացած ամբոխը հարձակվում է Ս. Սարգիսի և նրա որդու վրա: Առաջինը նահատակության պատկան ընդունում է նրա որդին՝ Մարտիրոսը: Ս. Սարգիսը բանտարկվում է և ամերեր մնալով իր հավատքի մեջ՝ գլխատվում: Նահատակվելուց հետո Ս. Սարգիսի մարմնի վրա լույս է ծագում: Քրիստոնեական հավատքի

համար նահատակվում են նաև նրան հավատարիմ տասնչորս զինվորները: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում են Համիան քաղաքում: Ս. Սարգիսը հայոց մեջ ամենապիղծ սրբերից է և պատահական չէ, որ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը նրա մասունքները բերում է Կարբի (Աշտարակի շրջան)՝ տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի: **Ս. Սարգիսը՝ երիտասարդների և սիրո բարեխոս** Ս. Սարգիս Ջորավարի տոնը Հայաստանում ընդունված է Գշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլև ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Ս. Սարգիս գորավարը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն աղոթում են սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված: Ս. Սարգիսը սիրո երազանքն իրականացնող սուրբ է: Ս. Սարգիսի մասին բազմաթիվ ավանդապատումներ կան: Ահավասիկ դրանցից մեկը: Աղքատ աշուղ Ղարիբը սիրում է մի մեծահարուստի աղջկա՝ Շահ-Սանամին: Վերջինս ևս սիրում է նրան, բայց աշուղն աղքատ էր, և աղջկա հայրն արգելում է նրանց ամուսնանալ, քանի որ մտադրված էր նրան կնության տալ մի մեծահարուստի: Աշուղ Ղարիբը որոշում է

մեծ կարողություն կուտակելու համար գնալ օտարություն աշխատելու: Սակայն մինչև այդ աշուղ Ղարիբն իր սիրած էակից խոստում է վերցնում՝ յոթ տարի սպասել իրեն: Պայման է դնում, որ եթե ուշանա անգամ մեկ օր, աղջիկը թող ամուսնանա հոր ցանկությամբ: Այդ յոթ տարիները շատ դժվար են անցնում աշուղ Ղարիբի համար: Նա զրկված էր իր գեղեցկուհուն տեսնելու հնարավորությունից, որևէ լուր չուներ նրա մասին, սակայն չէր հուսահատվում, այլ կարոտով սպասում այն օրվան, երբ նրանք կհանդիպեն, ընտանիք կկազմեն և ամբողջ կյանքը կապրեն միասին: Յոթ տարի շարունակ գիշեր ու զօր աշխատելով՝ աշուղ Ղարիբը կարողություն ստեղծեց և տուն դարձի ճանփա ընկավ: Ճանապարհը լի էր փորձանքերով և խոչընդոտներով: Թվում էր, թե աշուղ Ղարիբն իր հույսը պետք է կորցնի, չի հասնի իր սիրած էակին: Այդ ամենից դրված՝ նա ազնիվ սրտով և արդար մտքով աղոթում է Ս. Սարգիսին՝ հայցելով արագահաս սրբի օգնությունը: Ս. Սարգիսը, լսելով սիրահարված աշուղի աղոթքը, իր արագահաս ճերմակ մտուցով բարձրացրած մրրիկի մեջ իսկույն հայտնվում է, աշուղ Ղարիբին նստեցնում ձիու գավակին և մեկ ակնթարթում հասնում Շահ-Սանամի մոտ: Աղջկա հայրը, գնահատելով աշուղ Ղարիբի կամքը, կատարված հրաշքը, նրանց անկեղծ սերն և նվիրվածությունը,

օրհնում է երկուսի միությունը: Ժողովրդական սովորություններից է նաև, երբ Ս. Սարգիս տոնին նախորդող գիշերը երիտասարդներն արդի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Այդ օրը հիշատակելի սովորություններից է փոխհնդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին և սպասել Ս. Սարգիս գորավարի ձիու պայտի հետքին: Ըստ ավանդույթի՝ Ս. Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի և ուն մատուցարանի մեջ դրված ալյուրի կամ փոխհնդի մեջ թողնի իր սպիտակ (մաքրություն, անաղարտություն է խորհրդանշում) ձիու պայտի հետքը, այդ տարի կիրակաճանա երիտասարդի երազանքը: Տոնի առթիվ սիրահարված երիտասարդները միմյանց բացիկներ և քաղցրավենիք են նվիրում: Հունվարի 21-ին Ս.Սարգիս Ջորավարի անունը կրող եկեղեցիներում կմատուցվի Ս. Պատարագ, որից հետո կկատարվի երիտասարդների օրհնության կարգ: Կբաժանվեն տոնի մասին պատմող գունազարդ բացիկներ: Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ այդ օրը Ս. Սարգիս անունը կրող եկեղեցիները բաց կլինեն մինչև երեկոյան ժ. 21.00-ն: *Մամրո դիվան*

# ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՎ ԱՄԱՆՈՐ

## ՄԵՐ ՀՅՈՒՐԱՍՐԱՀՈՒՄ

### Հանրային ռադիոյի գործադիր տնօրեն Արմեն Ամիրյան



Ի՞նչ խորհուրդ ունի Սուրբ Ծնունդը Ձեզ համար:

Սուրբ Ծնունդն ինձ համար տարվա ամփոփումն է և ապրած կյանքին գնահատական տալու հնարավորությունը: Ցավում եմ, որ Սուրբ Ծնունդը նույնիսկ իմ ընտանիքում դեռ այն տոնը չէ, ինչ պետք է լիներ, ինչպես քրիստոնյա աշխարհում: Միացյալ Նահանգներում, Եվրոպայում Սուրբ Ծնունդը հիմնական տոն է և Նոր տարին առանձնապես որևէ նշանակություն չունի: Շատ կցանկանայի, որ Հայաստանում էլ այդ սովորությունը լիներ: Թեև մեր ժողովուրդը 70 տարի շարունակ շեղվել էր հավատից և հոգևոր խորհուրդների չունեցրել, բայց այսօր շրջադարձ կա դեպի հոգևորը: Կցանկանայի, որ Սուրբ Ծնունդն ու Նոր տարին ոչ թե տպավորվեր կենդանակերպի նշաններով, այլ՝ Հիսուս Քրիստոսի տարեդարձով:

Իսկ ինչպե՞ս վերադարձնել 70 տարիների կորցրածը:

Շատ կարևոր դեր ունեն հեռուստատեսությունն ու ռադիոն: Հուրախություն մեզ՝ Արարատյան թեմն ունի պաշտոնաթերթ, ինտերնետային կայք, հեռուստահաղորդում: Սա շատ կարևոր է հատկապես երիտասարդ սերնդի համար, բայց կարծում եմ, որ պետք է ավելի արդյունավետ դարձնել ռադիոհեռուստահաղորդումները, քանի որ այսօր հասարակությունը շուտ է ցանկանում, այլ ոչ՝ խորհուրդ, որովհետև խորհուրդը վախեցնում է հեռուստադի-

տողին և ռադիոլսողին, որոնք չցանկանալով լսել՝ փոխում են ալիքը: Պետք է շուտ, խաղ կազմակերպել, որպեսզի մարդիկ մասնակցեն և ինչ որ բան իմանան: Գիտեմ, որ Եկեղեցին այնքան էլ լավ չի վերաբերում շոուներին, բայց այս դեպքում՝ փրկություն է, որպեսզի մեր երիտասարդությունը վերադառնա դեպի հավատ, Եկեղեցի, հակառակ դեպքում այդ նույն շուտն օգտագործում են աղանդները, ինչը գրավում է մեր հասարակությանը՝ հատկապես երիտասարդ սերնդին: Կարծում եմ, Եկեղեցին պետք է քայլ անի, որ այդ հոգևոր շուտն ասվածը մտնի մեր կյանք:

Ինչպե՞ս են Ձեր ընտանիքի երիտասարդները դիմավորում տարվա կարևոր տոներից մեկը:

Տղաս ու աղջիկս, որ երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ են, առավել լուրջ են ընկալում այդ խորհուրդը: Ես, հնարավոր է Ս.Ծննդյան օրն ընթացիկ աշխատանքի մեջ լինեմ, չմասնակցեմ արարողակարգին, սակայն նրանք անպայման գնում են Եկեղեցի, մասնակցում ճրագալույցի Ս.Պատարագին: Ես կրթվել եմ խորհրդային հասարակությունում, որտեղ Նոր տարին ընդամենը դեկտեմբերի 31-ից հունվարի 1-ն անցում էր, որ պետք էր բացել շամպայն, ուտել ձկնկիթ, խմել կենցաղներ, ասել բարեմաղթանքներ:

Սուրբ Ծննդյան օրը փորձում եմ ավելի առանձնանալ և գնահատել այն, ինչ արել եմ անցած տարվա ընթացքում: Եվ եթե ինչ-որ բան սխալ եմ արել, փորձում եմ մեղքերիս համար ներողություն խնդրել և շտկել իմ սխալները:

Պետության վերաբերմունքը ևս պետք է, որովհետև հասարակությանն ինչ հրամցես՝ կընդունի: Շատ կարևոր է, որ պետական այրերը հոգևոր մեր տոները մասսայականացնեն: Մենք դեռևս հեռուստառադիո եթերներ ենք շարունակում պատրաստել խորհրդային ոգով:

Իսկ պետությունը, թե՞ Եկեղեցին է նախաձեռնել:

Կարծում եմ, սա այն դեպքն է, երբ Եկեղեցին և պետությունը միասնական պետք է լինեն: Դարեր շարունակ հայ ժողովուրդը կարողացել է հարատևել իր հավատի շնորհիվ: Իմ կարծիքով, պետական այրերը պետք է գիտակցեն, որ մեր հավատն է պետությունն ամուր ու կուռ պահում:

Ձեր բարեմաղթանքը:

Ցանկանում եմ, որ 2008 թվականին քրիստոնեաբար վերաբերվենք մեկս մյուսին: Այս տարին ընտրությունների տարի է և շատ կարևոր է, որ պատասխանատվությամբ մոտենանք այդ ամենին, հակառակ դեպքում կունենանք ծանր հակամարտություններ, փորձություններ:

# ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆ

Աստվածահայտնության ութերորդ օրը Քրիստոսի անվանակոչության տոնն է նշվում: Տոնացույցում այդ օրը հիշատակվում է որպես թլիսատության տոն, թերևս այն պատճառով, որ հրեական օրենքի համաձայն թլիսատության արարողության առթիվ էր անվանակոչություն կատարվում:

Այդ սովորույթը գալիս է դեռևս հնուց: Ըստ Հին Ուխտի՝ Աստված հրամայեց Աբրահամին, որ նրա սերնդակից բոլոր արու զավակները ծննդյան ութերորդ օրը պետք է թլիսատվեն (Ծննդ. Ժ 12): Երկնային այդ հրահանգն անխափան կերպով շարունակվեց մինչև Մովսեսի ժամանակները ու անցավ նրա սահմանած օրենքների շարքում: Այդ օրենքի գործադրությունը պարտադիր էր, իսկ չենթարկվողը պատժվում էր անգամ մահվամբ: «Ութերորդ օրը չթլիսատված արուն թող վերանա իր ցեղի միջից, որովհետև խախտած կլինի իմ ուխտը» (Ծննդ. Ժ 14): Ուստի Հովսեփը և Մարիամը՝ որպես բարեպաշտ ու օրինապահ հրեաներ, ութօրյա Փրկիչին տարան տաճար և թլիսատման արարողությունից անմիջապես հետո անվանակոչեցին Հիսուս:


Այսպիսով, Ինքը՝ օրենք սահմանողը, հետևում է օրենքին, «Որպեսզի հավատի միջոցով ազատի աշակերտներին օրենքից և ամրապնդի մտերմությունը, որ չհրաժարվեն Նրանից, ում սպասում էին»: Քանզի «Նա եկավ ոչ թե ջնջելու օրենքը կամ մարգարեներին, այլ՝ լրացնելու» (Մատթ. Ե 17), ուստի թլիսատվեց մյուս հրեաների պես: «Երբ ութ օրերը լրացան, և Նա թլիսատվեց,

Նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չէր հղացել մոր որովայնում» (Ղուկ. Բ 21): Այսինքն, ինչպես խորհում է Ս. Հովհանն Ոսկեբերանը, եթե մենք անվանակոչվում ենք ծնվելուց հետո, ապա Հիսուս անվանակոչվեց ծնունդից դեռևս շատ առաջ, քանի որ «Նա սկզբից Աստծո մոտ էր» (Հովհ. Ա 2): Հիսուս կոչվեց Փրկիչ, որովհետև ուներ փրկչի իր գործն ու առաքելությունը: Այդ անունը հայտնի դարձավ Մարիամին ավետման օրը Գաբրիել հրեշտակապետի, իսկ Հովսեփին՝ երազի միջոցով: «Մարիամը մի որդի պիտի ծնի և նրա անունը Հիսուս պիտի դնես, քանի որ նա պիտի փրկի իր ժողովրդին մեղքերից» (Մատթ. Ա 21): Իսկ Քրիստոս բառը թարգմանաբար նշանակում է Օծյալ, այսինքն՝ աստվածային նախախնամությամբ երկիր առաքված՝ կարևորագույն գործ կատարելու: Եսայու մարգարեության մեջ Քրիստոսին տրված է նաև էմանուել անունը, որը նշանակում է «Աստված մեզ հետ» (Մատթ. Ա 23-24):

Քրիստոնեության տարածման ավելի վաղ ժամանակներում հրեա քրիստոնյաները շարունակում էին պահպանել թլիսատության սովորույթը, բայց Պողոս առաքյալը արգելեց դրա հետագա գործածությունը՝ փոխարինելով այն հոգու թլիսատությամբ:

Անվանակոչության տոնը հայոց Եկեղեցում նշվում է հունվարի 13-ին և համարվում է անշարժ տոն:

Պատրաստե՛ք Արմեն սարկավազ խԱՉՍԻՅԱՆԸ



Հայոց Եկեղեցու տոնացույցի համաձայն՝ Առաջավորաց պահքն այս տարի սկսվում է հունվարի 14-ից: Այն հանդիպում է Մեծ Պահքից երեք շաբաթ առաջ և հատուկ է միայն մեր Եկեղեցուն, որը Հայաստան մուտք գործեց քրիստոնեության ընդունումով:

Այս պահքն Առաջավորաց է կոչվում երկու պատճառով. նախ՝ որովհետև Մեծ պահքից առաջ է լինում՝ իբրև նրա «կարապետ ու նախընթաց», և երկրորդ՝ որովհետև Հայոց Եկեղեցու առաջին պահքն է:

Առաջավորաց պահքը հաստատել է Ս. Գրիգոր Լուսավորիչը:

Այս մասին վկայություններ կան Եկեղեցական մատենագիրներից Ս. Ներսես Շնորհալու, Պողոս Տարոնացու և Մխիթար Գոշի գործերում: Համաձայն նրանց հաղորդած տեղեկությունների՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը նախքան Տրդատ թագավորին մկրտելը արքունիքին ու նախարարներին պատվիրում է հինգ օր ծոմ պահել, որի շնորհիվ էլ բոլորն ազատվում են իրենց ցավերից ու հիվանդություններից: Ուստի Ս. Գրիգոր

# ԱՌԱՋԱՎՈՐԱՑ ՊԱՅՔ

Լուսավորչի կողմից սահմանվեց այս պահքը և պատվիրվեց հետայսու ամեն տարի պահել այն:

Առաջավորաց պահքը ուղեկցվում է ծոմով, որն իր բնույթով ամենախստակյացն է: Այն երբեմն սխալմամբ կոչվել է նաև Ս. Սարգսի պահք, քանի որ մեկ շաբաթ հետո Հայ Եկեղեցին նշում է Ս. Սարգսի տոնը: Իսկ այս պահքի ուրբաթ օրը հիշատակությունն է Ս. Հովնանի քարոզչության ու Նինվեի ապաշխարության:

Հնգօրյա պահքը զգայարանների սրբության համար է, որոնցով առաջին անգամ մարդու մեջ մտավ մեղքը, որին էլ հաջորդեց մահը: Քանզի Ադամն իր աչքերով տեսավ պտուղն ու ցանկացավ այն, ականջով լսեց խաբողի ձայնը, որն իրեն հաճելի թվաց, ապա գնաց դեպի ծառը և քաղեց պտուղը: Այնուհետև զգալով դրա անուշահոտությունն ու քաղցրությունը՝ կերավ այն ու մահ-

վան դատապարտվեց: Սակայն դրախտից վտարվելուց հետո հինգ օր ծոմ պահեց՝ զղջումով ու ապաշխարությամբ քավելով իր մեղքերը: Այնուհետև Ադամի որդիները, հետևելով իրենց հոր օրինակին, պահքը պահում էին նրա մամ: Այսպես էլ մարդիկ մեղքեր են գործում այս հինգ զգայարաններով, որոնք սրբվում են հնգօրյա պահեցողությամբ:

Իսկ Մովսեսը քառասնորյա պահք կարգեց, որպեսզի քառասուն օրերի ընթացքում ստանա Տասնաբանյա պատվիրանները, սակայն ժողովուրդը հինգ օր պահելուց հետո տրտնջաց, որի պատճառով նրանց համար բարեկենդան արվեց:

Նինվեացիներն էլ, որ անդունդի եզրին էին, Հովնանի քարոզությամբ՝ երեքօրյա պահքով փրկվեցին կործանումից, ինչպես ասում է Ս. Գիրքը. «Եվս երեք օր, և Նինվեն պիտի կործանվի»

(Հովնան Գ 4): Եվ նրանք՝ թե՛ մարդիկ և թե՛ անասունները, երեք օր ծոմ պահեցին, քուրձ հագնելով ապաշխարեցին ու փրկվեցին մահվանից: Այսպես էլ այն հավատացյալները, որոնք մեղքերի պատճառով իրենց աչքի առաջ դժոխքն ունեն, պահում են այս պահքը և փրկվում հոգով, ինչպես նինվեացիները՝ մարմնով: Նրանց օրինակով էլ պահում ենք երեք օրերը, իսկ չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ բնական պահքով, որպեսզի ամբողջ տարում հինգ զգայարաններով գործված հանցանքները Աստծո ողորմությամբ ջնջենք և շարժենք Բարձրալի գուրբը:

Այս պահքը կարգվեց նաև նահապետների կողմից, որոնք օրենքից, մարգարեություններից ու Ավետարանից առաջ էին: Ուստի մեր նախահայրերի հիշատակի համար այն պահում ենք առանց ընթերցումների ու պատարագի: Իսկ մնացյալ բոլոր պահքերը սահմանվեցին այնպիսի ժամանակներում, երբ արդեն կային օրենքը, մարգարեների ու առաքյալների խոսքերը:

# ԱՄԱՆՈՐԻ ԱՆՑԱԾ ԳԱՆՊԱՐՅՈՒՆ

Հայ ժողովրդի տոներին շատերը անցնելով հազարամյակների պատմությունն ու հասնելով մեզ, այսօր էլ շարունակում են սիրելի մնալ և մեծ մասսայականություն վայելել: Դրանք առանձին ժողովրդական, ազգային կամ եկեղեցական անվանել չենք կարող, որովհետև վաղուց արդեն նրանց մեջ ամբողջացվել, ընդհանրացվել ու նույնացվել են ժողովրդական ու եկեղեցական, ժողովրդականը դարձել է եկեղեցական և ընդունվել եկեղեցու կողմից, իսկ եկեղեցականն էլ դուրս գալով եկեղեցուց, դարձել է ժողովրդական կենցաղի մասնիկ:

Վիճակագրական և ազգագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամենամասսայական տոները մեզանում եղել ու մնում է Նոր տարին, որը տարեմուտի տոնն է և պատմության տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր անվանումներ ու տոնվել է տարվա տարբեր եղանակներին: Վաղմջական ժամանակներում հայերը տարեմուտը նշում էին գարնանը՝ մարտի 21-ին, գիշերհավասարի օրը, որպես բնության զարթոնքի տոն: Այնուհետև հին հայկական տոմարով տարեմուտը սկսում են նշել Նավասարդ ամսի Արեգ օրը, որը համապատասխանում է հուլյան տոմարի օգոստոսի 11-ին և կոչվել է Ամանոր կամ Նավասարդ: Այն վեր էր ածվում իսկական բերք ու բարիքի տոնի: Հայ աշխատավորները սեղանին էին շարում իրենց առաջին բերքը, իսկ տանտիրուհիները՝ իրենց ձեռքով պատրաստած անուշեղենը և բազմատեսակ մրգեր: Ամանորն ուներ նաև իր աստվածը, որը բերք ու բարիքի, հյուրընկալության աստված Վանատուրն էր: Ամանորյա հյուրընկալության հետ են կապվում մի շարք ասացվածքներ, որոնք պահպանվել են նաև մեր օրերում՝ «Տուն իմ տունն է, տուն, դուռ բացողին է», «Ղոնաղն Աստուծունն է» և այլն: Հետագայում, հուլյան տոմարին անցնելուց հետո (18-րդ դար), մեր ժողովուրդն էլ քրիստոնյա շատ ժողովուրդների նման տարեմուտի առաջին օրը նշում է հունվարի մեկին, իսկ Ամանորն էլ սկսում է կոչվել Նոր տարի: Այսօր Նոր տարվա տոնակատարությունները մեր ժողովուրդը նշում է հունվարի մեկին մինչև վեցը, իսկ հունվարի վեցին եկեղեցու հետ նշում է Քրիստոսի ծննդյան և մկրտության օրը:

Ամանոր - Նոր տարի տոնի նախապատրաստական աշխատանքները ցույց են տալիս, թե որքան լրջորեն է վերաբերվել ու վերաբերվում, ինչ մեծ ակնկալիքներ ունի մեր ժողովուրդը նրանից: Նախ առանձին խնամքով մաքրվել, կարգի է բերվել բնակարանը, նորոգվել են նրա քանդված մասերը, պահոցներից հանվել ու լվացվել է նոր ամանեղենը, սպիտակեղենը: Այնուհետև սկսում էին պատրաստել Նոր տարվա ուտելիքը, որի մեջ գերիշխում էր ծխականը: Նոր տարվա ամենա

ընդունված կերակուրներից էին ոսպից, սիսեռից պատրաստված քյուֆթան, ոսպից, սիսեռից, լոբուց, ձավարեղենից ձեռքով տոլման, ծեծված ցորենից, ընկույզից, նուշից, չամիչից մեղրով պատրաստած աճուռներ: Հայաստանի առանձին շրջաններից հատկապես Լոռիում մեծ նշանակություն էին տալիս լոբով պատրաստած կերակուրներին: Եթե Նավասարդին սեղանին դրվում էին հիմնականում թարմ մրգեր, ապա հունվարյան Նոր տարում դրանց ավելանում են նաև չոր մրգերը և ընդեղենը: Տանտիրուհիները ձգտում էին սեղանին դրվող բերք ու բարիքից ապահովել յոթից ոչ պակաս տեսականի՝ սրանով ընդգծելով տոնի ծիսական բնույթը:

Տոնի նախապատրաստությունների առանցքը կազմում էին բազմաթիվ ու բազմազան խմորեղենը, որոնց մեջ առաջին հերթին առանձնանում է հաց թխելու արարողությունը: Նոր տարին պետք էր նոր հացով սկսել, իսկ նոր հացն էլ նոր թթխմորով: Առանձին արարողության էր վերածվում ծիսական հացի պատրաստումը, չէ որ Ամանորը հայոց մեջ պատի օր էր: Հայաստանի տարբեր շրջաններում ծիսական հացն ուներ տարբեր անվանումներ՝ «Կրկենի», «Կլոճ», «Փառնիկ», իսկ ամենատարածվածը «Տարի հացն» էր: Որպես ծիսական ուտելիք այն պատրաստվում էր այլուրով ու մեղրով, բացառվում էր կաթի, մածուկի, կարագի, յուղի օգտագործումը: Ծիսական հացի մեջ որևէ նշան էր դրվում (հիմնականում դրամ) և կտրվում ու բաժանվում էր ընտանիքի բոլոր անդամներին: Ում որ ընկնում էր նշանը, նա համարվում էր այդ տարվա հաջողակը: Ետո վայրերում «Տարի հացից» բաժին էին հանում նաև կենդանիներին, արտին, հանդին, այգուն: «Տարի հացից» բացի պատրաստում էին նաև այսպես կոչված հնա-յորդ, հաջողություն ապահովող, չարք խափանող խմորեղեն, որոնք նման էին աշխատանքային գործիքների և դրանց թխելու ձևով (ուռած կամ սմբված) իմանում էին թե նոր սկսվող տարում նրանց տերերին ինչ է սպասվում: Արտաքինից պարզունակ թվացող այս սովորույթն այսօր պահպանվել է թերևս միայն գյուղական վայրերում, այն էլ քիչ քանակությամբ, իսկ քաղաքներում պահպանվել ու գնալով մեծ տարածում է ստանում «Տարի հացի» պատրաստման արարողությունը: Ամանորը հայոց մեջ սկսվել է դեկտեմբերի 31-ի գիշերը: Այս սովորույթը պահպանվել ու շարունակվում է նաև այսօր: Որոշ շրջաններում այդ օրը նշում էին ընտանիքով, իսկ այլ տեղերում տոնական այցելությունները սկսվում էին հենց գիշերը: Դրանցից առանձնացնենք պատմիկների ու աղջիկների խմբակային ու ծիսական շրջայցերը, որոնց ժամանակ նրանք շրջում էին տներով ու երգելով ընտա-

նիքի անդամներին բարեմաղթանքներ ցվողում, որի դիմաց «վարձատրվում էին» նոր տարվա բարիքներով, որոնք տանտիրուհիները տեղավորում էին երդիկից կախած նրանց դատարկ տոպրակների մեջ: Հարկ է նշել, որ տոնական այցելությունների գնացողները երբեք դատարկ ձեռքով չէին գնում և այս սովորույթը պահպանվել է նաև մեր օրերում:

Ամանորի կենդանի շատ կարևոր աշխատանք էր վերապահված նաև երիտասարդներին: Նրանք գնում էին թարմ ջուր բերելու, որովհետև օրվա այդ պահին ջրին հատուկ



գորություն էր վերագրվում: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս, իր մեջ մեծ խորհուրդ պարունակող սովորույթը, պահպանվել է նաև այսօր: Ամանորի գիշերը, ժամը 12-ը դեռ չի անցել, տանտիրուհիները մի լիքը դուր ջուր են մցնում շեմից ներս: Հացից ու ջրից բացի պետք է նորոգվեր նաև օջախում վառվող կրակը: Այդ նպատակով դաշտում մի մեծ քոթուկ էր առանձնացվում: Նոր տարվա գիշերը այն տեղավորելով օջախի մեջ վառում էին, աշխատելով կրակը պահպանել մինչև առավոտ, իսկ առավոտյան այրված քոթուկի մոխիրը շաղ էին տալիս դաշտերում, հանդերում, իրենց տնամերձ այգուն, որպեսզի բերքն առատ լինի: Այսօր քաղաքային կենցաղում նկատելի են Նոր տարվա գիշերը տան լույսերը վառ թողնելու սովորույթ, որը կարծում են կարելի է համարել տան կրակը վառ պահելու ժողովրդական սովորույթի վերապարտում: Ամանորի տոնական նախապատրաստությունների մեջ իր հետաքրքիր դրսևորումներով առանձնանում է նաև տոնածառի երևույթը: Այն հանդիսանում էր Հայաստանի ողջ տարածքում և հայաբնակ բոլոր վայրերում, բայց տարբեր դրսևորումներով: Մի վայրում (Պոնոս) Ամանորի երեկոյան զարդարում էին ձիթենուց

կտրված հաստ ճյուղը և կոչում էին «Կաղանդ ծառ», մեկ այլ վայրում ծառ էին պատրաստում ցորենի հասկերի խորձերից ու վրան տարբեր չարխափաններ կախում: Ընդհանրապես ծառի, բնության պաշտամունքը գոյություն է ունեցել շատ վաղ ժամանակներից և կապվել է հոգու անմահության ու կյանքի հավերժության գաղափարի հետ: Նոյի ուղարկած աղավնին վերադառնում է բերանին ծառի ճյուղ, որը նոր կյանքի, բնության զարթոնքի խորհրդանշիչ է: Հայոց մեջ պաշտամունքի խորհրդանշիչ են եղել սոսին, ուռենին և բարդին: Ծառը համարվել է նաև ընտանիքի, գերդաստանի հավերժության խորհրդանշիչ («Կենաց ծառ») և պատահական չէ, որ այսօր էլ, երբ փորձում են ամբողջացնել գերդաստանի պատկերը, դա անում են ծառի տեսքով: Քրիստոնեության շրջանում ծառի պաշտամունքը դրսևորվում է Ծաղկազարդի, խաղողօրհնի և Նոր տարվա տոնածառի արարողության մեջ: Ավանդության համաձայն, երբ ծնվում է Հիսուս Քրիստոս, աշխարհը հրճվում է: Երկրագնդի տարբեր ծայրերից գալիս էին մարդիկ, տեսնելու մանուկ Հիսուսին՝ բերելով նրա համար թանկագին ընծաներ: Իսկ այն տան բակում, որտեղ ծնվել էր Հիսուս, աճել էին երեք ծառ՝ արմավենի, թթեն և եղևնի: Երբ շոգն էր պատում արմավենին տարածում էր իր լայն տերևները և հով էր անում փոքրիկին: Թթենին տալիս էր իր տերևները, որպեսզի դրանից մանուկ Հիսուսի համար փափուկ անկողին պատրաստեին:

Հնագույն ժամանակներից եկել ու քրիստոնեության շրջանում որոշակի փոփոխությունների է ենթարկվել նաև Չմեռ պապի խորհուրդը: Վաղ ժամանակներում, դեռևս Բարեկենդանի տոնակատարությունների ժամանակ, ընդունված էր դիմակներով հանդես գալու, երեխաներին զվարճացնելու և նվերներ բաժանելու սովորույթը: Ս.Սարգսի տոնից որոշ ժամանակ անց նշվում էր Ս.Պարթևի օրը, որը անվանում էին Մենծ Պապուկի տոն: Այդ օրը իսկական տոնախմբության էր վերածվում հատկապես երեխաների համար: Ընտանեկան խրախճանքի ժամանակ, տան մեծը աննկատ դուրս էր գալիս, գլխին դնում սրածայր գլխարկ (քուրզ), դեմքին՝ բրդից սարքած բեղ ու մորուք, մեջքին՝ մեծ տոպրակ, մեջը նվերներ, ձեռքին՝ գավազան և ներս մտնում: Նրա կերպարանափոխությունը մեծ ուրախություն էր պատճառում բոլորին: Սկսվում էին երգ ու պար, կատակները: Վերջում Մենծ Պապուկը նվերներ էր բաժանում երեխաներին: Հետագայում փոխվում է երեխաներին նվերներ բերող Մենծ Պապուկի ոչ միայն ժամանակը, այլև արտաքին տեսքը և նա դառնում է սպիտակամորուս Չմեռ պապ, որը երեխաներին հյուր է գալիս Նոր տարվա գիշերը:

Սուսաննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ժամանակ անցավ... 2004 թվականն էր: Հնագետ Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հետ առաջին անգամ հանդիպել էի 1984-ին, գրել «Ի պաշտպանություն երեկույթի» հոդվածը: Սակայն, թանկագին ընթերցող, կյանքն առաջ է շարժվում, լինում են բազմաթիվ դրական և բացասական իրավիճակներ: 1988-ի երկրաշարժից հե-

# ԳԱՅԱՆԵ ԿԱԶՆԱՏԻ ՍԵՐՆ ԱՐ ԵՐԵՐՈՒՅՔ

տոն էս հաճախ էի մտածում Երեկույթի ճակատագրի մասին, քանի որ տեսել էի ու գիտելի՝ 1500-ամյա տարիք, Անիպեմզա քարհանքի պայթեցումներ, երկրաշարժեր... Եվ հիմա, այս ժողովածուի առիթով, (սովետը վաղուց է փլուզվել), ստիպված են կրկնել Մարմաշենի առիթով ասածս՝ հետերկրաշարժյան անդրադարձ կամ Գայանե Կազնատիի սերն առ Երեկույթ:

Անհամբեր գանգուն են հնագետ Ֆելիքս Տեր-Մարտիրոսովին: Պարզ է, թե ինչ պիտի հարցնեն: Նա ասում է. երբ էս տաճարի մոտ պեղումները շարունակում էի, վիճակն այնպիսին էր, որ պետք էր պատերի կողքերից ժամանակավոր հենապատեր դնել: Եվ դրեցին՝ օգտագործելով երկաթե ձողեր: Իսկ քարհանքի պայթեցումները, հարցրեցի: Դադարեցվեցին բավական ուշ, Սպիտակի երկրաշարժից հետո միայն: Նա խոսեց նաև մի ծրագրի՝ Երեկույթն ամրակայելու մասին և ավելացրեց, որ ֆինանսական դժվարություններ կան: Վերջում Տեր-Մարտիրոսովը խորհուրդ տվեց դիմել «Քարեղարանի» աշխատողներին:

Որքան ուրախ են և հույսով լցված. «Քարեղարանում» միավորված են իտալացի,

հայ և իտալահայ փորձագետների գիտելիքները և խանդավառությունը:

Ճարտարապետ Մերի Դանիելյանն ասաց. Մարմաշենի ամրակայման աջակցող նույն Գայանե Կազնատին՝ իտալահայը, 2000 թվականին Հուշարձանների պահպանության համաշխարհային ֆոնդի միջոցով գումարներ հայթայթեց նախ՝ Երեկույթի բազիլիկ եկեղեցու ամրակայման նախագծի, ապա և շինարարության համար:

2003-ին քանդվեց Երեկույթի հյուսիսարևմտյան ավանդատան պատը և վերահավաքվեց: Առանց քանդելու հնարավոր չէր, ասաց Մերին: Կային քայքայված քարեր, բացակա քարեր, որոնք լրացվեցին նորերով, իսկ ճաքած հատվածները կարվեցին իտալական մեթոդով, պատերի արանքները կարանախցցվեցին:

Մեր գրույցի վերջում ճարտարապետն ասաց նաև, որ համատեղ աշխատանքները շարունակվելու են: Գայանե Կազնատիի հետ մշակված նախագծերը նախ քննարկվում են հանրապետության պատմամշակույթային հուշարձանների պահպանության գործակալության գիտխորհրդում և միայն դրական եզրակացության դեպքում

աշխատանքներն սկսելու թույլտվություն ստանում:

Չեն կարող Երեկույթի մասին խոսքս ավարտել առանց Վիգեն Իսահակյանի «Հայրս» հոյակապ գրքից մեջբերում անելու: Ֆրանսիայում գտնվելու ժամանակ բանաստեղծի ընտանիքը գնում է Ավալոն բնակավայր, որտեղ տեսնելու էին Վեզլեի 11-րդ դարի ճարտարապետական մի կոթող: Այդ առիթով Ա. Իսահակյանը հայտնում է իր կարծիքը:

«Տաճարը՝ ինքը գոթական և ռոմանական արվեստների դաշն գրկախառնում է: Ամեն մի սյունի առաջ տրոփում է սիրտը գեղարվեստի երջանակացնող վայելքով:

Հափշտակված նայում են տաճարին, նայում և տեսնում են Երեկույթը Շիրակի դաշտում, մենավոր, ամայի, դարերի և թշնամիների առաջ կքած, բայց վեհ, չքնաղ, երագային:

Ինչո՞ւ այսպիսի սրտագին մանություն են գզում Երեկույթի և Վեզլեի միջև՝ 5-րդ և 11-րդ դարերի այս հրաշագեղ կոթողների: Երկուքն էլ վսեմացած, հոգիացած, անմահացած»:

Սարգս ԴՈՒԿԱՅԱՆ

# Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ ՔԱՐՈՋ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք եւ միմյանց համար աղոթք արեք»:

Նախ պետք է իմանալ, որ խոստովանությունն անհրաժեշտ է, ինչպես Ս. Սկրտությունը: Ինչպես որ խորհուրդներից առաջինը Ս. Սկրտությունն է, իսկ հետո մյուս բոլորը, նույնպես էլ նախ խոստովանությունն է, իսկ հետո մյուսները՝ ապաշխարությունը, պահքը, աղոթքը և այլն: Վարդապետներն ասում են, թե խոստովանությունը թաքցրած մեղքերը թողության հույսով հայտնելն է, որովհետև խոստովանության նյութը մեղքն է, գործը՝ խոսքով հայտնելը, իսկ լրումը՝ թողության հույսը: Խոստովանությունը երկու կերպ է լինում՝ մեկը մտավոր, քանզի մարդ իր մտքում միշտ պետք է իր մեղքերը դնի Աստծո առաջ, իսկ մյուսը՝ խոսքով, և սա պետք է հայտնել քահանային: Քահանային խոստովանելն անհրաժեշտ է 10 պատճառով. նախ, որովհետև մարդը հոգուց և մարմնից է կազմված, դրա համար էլ պետք է հոգով ու մարմնով կատարելապես խոստովանի քահանային, որը հոգու հայրն ու մարմնի դայակն է: Երկրորդ՝ նախքան Քրիստոսի մարմնամալը մարդիկ մտքով էին միայն Աստծուն խոստովանում, իսկ երբ մարդա-

ցավ, պետք է խոստովանել մարդուն, այսինքն՝ քահանային, ով Քրիստոսի փոխանորդն է: Երրորդ՝ Աստված քահանաներին կապելու և արծակելու իշխանություն տվեց: Սա ցույց է տալիս, որ նրանք մեղքի դատավորներ են և պետք է նրանց խոստովանել: Չորրորդ՝ քանզի որ քահանան է կատարում եկեղեցու 7 խորհուրդները՝ Ս. Սկրտություն, Ս. Պատարագ, պսակ և այլն: Հետևաբար, քահանան է դնում ապաշխարությունը, ուստի քահանային ենք խոստովանում, քանզի խոստովանությունն ապաշխարության խորհրդի փուլերից մեկն է և առաջինը: Հինգերորդ՝ քահանան է մեղքերի քավիչը, ինչպես որ իր անունն է հայտնում. «քահանա» բարգմանվում է քավիչ, ուստի պետք է քահանային խոստովանենք: Վեցերորդ՝ քահանան Աստծո և մարդու միջև հաշտության միջնորդն է ու բարեխոսը, այդ պատճառով պետք է քահանային խոստովանենք, որպեսզի նա Աստծուն հաշտեցնի մեղավորի հետ: Յոթերորդ՝ քահանան մեղավորի առջև Քրիստոսի թարգմանն ու լեզուն է, որով խոսում է մեղավորի հետ նրա զոյման ու դարձի մասին: Ութերորդ՝ քահանան Քրիստոսի առաջ աղերսում է մեղավորի զոյմումը և Նրանից թողության շնորհ իջեցնում զոյջա-

ցողի վրա, որպեսզի զոյջացողի համար թողություն լինի: Իններորդ՝ քահանան, ըստ մարգարեական խոսքի, Ամենակալ Աստծո պատգամաբեր հրեշտակն ու օրենսդիրն է, որովհետև հրեշտակի գործ է կատարում և օրենք դնում: Այդ պատճառով է նա Աստծո օրենքների պահպանությունը պահանջում: Տասներորդ՝ քահանան քննողն ու դատողն է մաքուրի ու պիղծի, անարատի և արատավորի, ինչպես Օրենքն է ասում. «Նրանք պիտի զատեն պիղծը մաքուրից»: Ուրեմն պարզ է ինչու է տեղ կոչվում, այսինքն՝ դատող ու պատժող: Դրա համար է քահանան ինչպես Քրիստոս դատաստանի աթոռին նստում, իսկ մեղավորը ձախ կողմում՝ ձախակողմյան դասի օրինակով, գլխիկոր ու անոթահար, արտասվալից աչքերով ու սրտի հառաչանքով խոստովանում է իր հանցանքներն Քրիստոսին: Եվ քահանան իշխանության կարգով նրան թողություն է տալիս և ըստ դատաստանի քննության ու վճռի ծանր կամ թեթև ապաշխարություն դնում: Այդ պատճառով պետք է ոչ թե ինչ-որ մեկին, այլ քահանային միայն խոստովանել: Իսկ եթե մեկն ասի, թե ինչ է այն խորհուրդը, որ քահանային խոստովանելով թողություն է լինում, ասում ենք, թե շատ բաներ կան, սակայն այժմ մի քանի է պարզ օրինակներով կասենք, որպեսզի դուք հասկանաք: Առաջին՝ երբ մեղք մեղք գործում, եկեղեցու կանոնների և Աստծո պատվիրանների դեմ ենք հանցավոր դառնում: Այն ժամանակ պետք է զանք և ասենք, թե որ պատվիրանն ենք խախտել, և քահանան գիտի, թե քանի պատվիրան ենք խախտել և որ մեղքն ենք գործել: Նա, ով գալիս է քահանայի մոտ, հնազանդվում է կանոններին, իսկ ով ասում է մեղա Աստծո, հնազանդվում է Աստծո պատվիրաններին, և քահանան իշխանությամբ ու աղոթքներով արձակում է նրան: Կանոնների դեմ գործած հանցանքները քահանան ներում է իշխանությամբ, իսկ Աստծո պատվիրանների դեմ գործած հանցանքների համար աղոթքով Աստծուց է խնդրում նրա թողությունը և երկու պարտքից էլ ազատում է: Սա առաջին խորհուրդն է: Երկրորդ՝ երբ մարդ հայտնում է իր գանգառը, մեծ մեկի է հայտնում, թե այս անունով մարդն այսպես ինձ զրկանքի ենթարկեց ու վնաս պատճառեց: Նույնպես էլ մենք քահանայի առաջ ենք զանգատվում սատանայից, թե այս բանն արեց ու այն մեղքը գործել տվեց: Քահանան զանգատը բարձրացնում է առ Աստված և օգնելով՝ թշնամուն հաղթում են: Երրորդ՝ ինչպես որ գողն է գաղտնի մտնում տուն, բայց երբ աղաղակում են, տանից փախչում է, նույնպես էլ մեղքն ու սատանան են գողի նման հոգու մեջ մտնում: Երբ քահանայի առաջ խոստովանությամբ հայտնում ու աղաղակում ենք, քահանան օգնում ու խրատ է տալիս և մեղքի հարձակումները դադարում են: Չորրորդ՝ խոստովանությունը քանդում է սատանայի դաշինքը, քանզի ինչպես մարդը, ով դաշնակից է մարդուն, նրա գաղտնի խորհուրդը պահում է, նույնպես էլ մեղավորը մեղքի մեջ դաշնակից է սատանային, և երբ խոստովանում է, հայտնում է նրա գաղտնիքը և խայտառակում: Այն ժամանակ սատանան հեռանում է ու այլևս մեղք գործել չի տալիս, որովհետև իր սիրելին թշնամի դարձավ: → 5

Սայաթ-Նովան միջնադարի վերջին առեղծվածն է: Բացառիկ ուժի և հմայքի տեր մի բանաստեղծ, որը որքան միջնադարին է, նույնքան լեզվով, ոգով, կերպարով, նոր ժամանակներին: Ամենահիմնականն է, որ նրանով հետաքրքրվեցին, նրան գնահատեցին 20-րդ դարի ամենամեծերը՝ Գ. Թումանյանը, Ե. Չարենցը, Լ. Աղբալյանը, Պ. Սևակը: Ամենահիմնականն է, որ նա այսօր էլ շարունակում է մնալ ամենասիրված երաժիշտն ու բանաստեղծը: Սայաթ-Նովան շարունակում է հոգիներ միավորել, ոգեղեն խոսք ու մեղեդի ապրեցնել և ջերմացնել մարդկային կյանքը: Սայաթ-Նովան եզակի գեղարվեստական արժեք է՝ աշուղական ձևի մեջ մարմնավորված ժողովրդական տարերքի բացառիկ արտահայտություն: Համեմատելով նրա համար է ու նաև նրանով է իմաստ ստանում:

**ԿՅԱՆՔ:** Ինչպես ամեն մի մեծություն, Սայաթ-Նովան ևս իր կյանքով ու ստեղծագործությամբ այսօր էլ շարունակում է բազմաթիվ վիճելի խնդիրներ հարուցել: Սայաթնովագիտությունը 1852 թվականից սկսած, արդեն իսկ 150 տարուց ավելի պատմություն ունի: Սայաթ-Նովայից պահպանվել է երեք ինքնագիր մատյան՝ ա) «Դավթար»-ը, որի հիման վրա Գևորգ Ավստրոյանը 1852-ին Մոսկվայում հրատարակեց նրա խաղերը, բ) 1766-ին Ջաքարայի Կախի քարվանսարայում նրա ընդօրինակած սովոր գրչագիրը, Աստվածաշունչ մատյանից բաղված մեջբերումներով, որը թավրիզում 1906-ին տեսել և նկարագրել է Հրաչյա Աճառյանը, գ) Պարսկաստանի Գիլան նահանգի Ենգելի նավահանգստային քաղաքի հայկական եկեղեցուն 1760-1761 թթ. ընդօրինակած Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, որը 1981 թ. Մատենադարանում հայտնաբերել ու նկարագրել է Բաբկեն Չուբասզյանը: Սայաթ-Նովան՝ ավազանի անու-

## Ս Ա Յ Ա Թ - Ն Ո Վ Ա (1722-1795)

նով Հարություն (Արուսի) Սայաթյանը, ծնվել է 1722 թ. Թիֆլիսում: Թիֆլիսն այդ ժամանակ հայկական քաղաք էր, բնակչության 75 տոկոսը հայեր էին՝ 20000-ից 14500-ը: Իսկ հայոց լեզուն ընդունված էր ոչ միայն կենցաղում, այլև վրաց արքունիքում: Ապագա երգիչն ու բանաստեղծը ծնվել է կիսաճորտի ընտանիքում: Տարբեր ուսումնասիրողներ, տարբեր կովաններ ունենալով, նրա ծննդյան տարին համարել են 1711, 1712, 1713, 1717, 1718, 1722, 1724, 1726 թվականները: Գ. Ավստրոյանը շրջանառության մեջ է դրել 1712-ը, ինչը երկար տարիներ ընդունված էր համարվում: Ինքը՝ Սայաթ-Նովան, «Այբբեմըն կարթացիլ իմ դասեդաս» խաղի մեջ իր մասին գրում է. «Սայաթ-Նովա, տարիքս էլավ քարատուն...»: Խաղի գաղտնագիրը Ս. Հասարթյանը բացահայտել է որպես 1757 թվական, ըստ որի՝ Սայաթ-Նովան ծնվել է 1717-ին: Մեկ այլ բացատրությամբ գաղտնագիրը բացահայտվում է որպես 1792 թվական. «... երբ Սայաթ-Նովան 70 տարեկան էր, իսկ դրանից ուղիղ 40 տարի առաջ՝ 1752 թ. սկսվել էր նրա սիրտ ողբերգությունը: Ահա այս քառասուն տարին է ակնարկում երգիչն այս ծածկագիր խաղի մեջ և ոչ թե իր տարիքը, ինչպես հասկանում են տողի ուղղակի ընկալումով»: Այս կարծիքներից թե ո՞րն է ճիշտ, թողնում ենք ապագա բանասերին: Մեկ այլ խաղի հենց առաջին տողում Սայաթ-Նովան հայտարարում է. «Ինձ ու իմ սիրելյան յարին մե տարի բերած գիտենաք...»: Եթե նրա յարը Աննա Բատոնիշվիլին է, ապա՝ վերջինս ծնվել է 1722 թվականին: Այս թվականը վկայում է Գ. Լեոնիձեն իր «Բեսիկի» աշխատության մեջ: Սա նշանակում է, որ բանաստեղծը ծնվել է 1722-ին: Պ. Սևակը 15 կովանների փաս-

տարկումով ապացուցել է, որ Սայաթ-Նովան պետք է ծնված լինի 1722 թվականին, ինչն էլ այսօր համարվում է ընդունված տարեթիվ: Սայաթ-Նովայի հայրը՝ մահտեսի Կարապետը, ծնունդով Աղանայից, հաստատվել էր Հայեպուն: Այդ մասին թուրքերեն խաղերից մեկում երգիչը գրել է. «Սայաթ-Նովու հոր վաթանից հարց կու տան, Ասուն է, վուր Հալաբն է, յա Աղանան»: Հայեպից մահտեսի Կարապետը փոխադրվում է Թիֆլիս և ամուսնանում սանահինեցի Սառայի հետ: Այս կապակցությամբ «Դոստը, յարը, մեկ էլ ընգիրն աշխարհում...» թուրքերեն խաղի մեջ բանաստեղծը գրում է. Սայաթ-Նովու վաթանիցըն հարց կու տան. Մեկը կոսե Հինդն է, մեկը՝ Համադան... Վաթանըս Թիֆլիսն է, կողմը՝ Վերաստան. Մերըս Հավաբարցի, հերըս Հալաբու): «Վարպետներու հայտնի խոսքը...» դարձյալ թուրքերեն խաղում ավելացնում է. «Սայաթ-Նովեն ինքը հայ է, Իր հավատքին ամուր կանգնած»: Սայաթ-Նովայի կյանքի հետագա տարիների մասին բավականաչափ տեղեկություններ է հաղորդում 1750 թ. հունվարի 3-ին գրած «Փառք արարչին, գոյ անողին...» թուրքերեն խաղը, որի մեջ կարդում ենք. Ինքը տարիս երբ որ անցավ, դեռ հայտնի չէր, թե ինչ էր. Տասը տարեկան էլ դարձա, դեռ գիծ ու միժ կը շրջեի. Տասըմեկըս էլ լրացավ, դեռ էնքան էլ խելոք չէի. Տասըերկու տարեկանում ինձ հանձնեցին ուստաբարին: Տասըերեք տարեկանում իմ արիեստում տըվի, անցա.



Տասըչորսում, իմ շնորհքով, վարպետս պարզև ստացավ. Տասըհինգում շատ ջանք դրի, գիր-դալամին ընկերացալ. Տասըվեցըս երբ բոլորեց, ճանաչեցի չարն ու բարին: Տասըյոթ տարիս լրացավ, դեռ ես չէի եղել դաստան. Տասըութ տարիս երբ բոլորեց, տեսա և վարդ և վարդաստան. Տասըինը տարեկանում ման եկա Հաբաշ-Հինդուստան. Քըսան տարուց, էշխի ընկած, լալ կը ծախեն սովդաբարին: Այստեղից պարզվում է, որ տասներկու տարեկանում դարձել է ջուլիակի աշակերտ և բավականին հաջողություններ ունեցել այդ ասպարեզում. իր արհեստի մեջ այնքան է առաջադիմել, որ իր շնորհիվ վարպետը պարզև է ստացել: Տասնհինգ տարեկանում շատ ջանք է դրել գիր ու գրչին ընտելանալու, այսինքն՝ գրագիտությունն ձեռք բերելու համար: Սայաթ-Նովան դժվար թե լուրջ կրթություն ստացած լինի, նրա դպրոցը կյանքն էր, բազմալեզու ու խայտառակ Թիֆլիսը, որի փողոցներում էլ նա հմտանում է լեզուների մեջ և տիրապետում գրին: Գիր սովորելու համար ամենայն հավանականությամբ նա աշակերտել է որևէ գրագետ

մարդու մոտ կամ, ըստ Պ. Սևակի, «սովորել է ինչ-որ մի վանքում»: Սայաթ-Նովան բնածին տաղանդ էր և իր գրագիտությունը ձեռք է բերել ինքնուսուցմամբ: Նա հանճարեղ ինքնուսուցմամբ էր: Դրա առաջին ապացույցը նրա լեզուն է, որը ոչ թե գրագիտության լեզու է, այլ փողոցի: Տասնինը տարեկանում վրաց գրագրողի կազմում Սայաթ-Նովան ամենայն հավանականությամբ մասնակցել է Նադիր շահի հնդկական արշավանքներին («... ման եկա Հաբաշ-Հինդուստան»): «Սայաթ-Նովան կարող էր լինել Գիլի Ամիլխավարիի հեծելազորում, բայց ոչ Հերակլի շքախմբում, առավել ևս ոչ իբրև աշուղ-սագանդար...», - գրում է Պ. Սևակը: Միաժամանակ պատմական աղբյուրների վկայությամբ Սևակը հավելում է. «Այդ արշավանքին փոքր-ինչ ուշացումով (Ղանդահարի գրավումից մի քանի օր հետո, 1738-ի մարտին) միացել է նաև 18-ամյա Հերակլը»: Ամենայն հավանականությամբ այստեղ Սայաթ-Նովան աչքի է ընկել երգիչի իր աստվածատուր շնորհքով, արժանացել Հերակլի համակրանքին և նրա իսկ հովանավորությամբ դարձել վրացական պալատի արքունական երգիչ: → 5



# ՔԱՐՈՋ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

տովանում ու հայտնում է մեղքերը, ազատվում է սատանայի բերանից և կուլ չի գնում նրա որովայնի մեջ, որ դժոխքն է, քանզի մեղք գործելիս մարդը սատանայի բերանում է և հաջորդ տեղը դժոխքն է: Ինչպես որ կրակը, երբ մարդու ձեռքին կամ գոգին է, այրում է նրան, իսկ երբ նետում է, այլևս չի այրում, նույնպես էլ մեղքը հոգին այրող կրակ է, և քանի դեռ այն ներսում է, հոգին այրվում է, բայց երբ դուրս է նետում, հանգչում է, ինչպես Սողոմոնն է ասում. «Յնարավոր է արդյոք, որ մեկը կրակը պահի իր գոգի մեջ և շորը չայրի, կամ որևէ մեկը բոբիկ քայլի կայծ ու կրակի միջով ու իր ոտքերը չայրի»: Յոթերորդ՝ ինչպես որ ծածուկ պահվող խոցը չի բժշկվում, բայց երբ ցույց ենք տալիս բժշկին, դեղ է դնում և առողջանում է, նույն կերպ էլ մեղքը, որ հոգու խոցն ու վերքն է, հայտնում ենք քահանային, և նա մեղքերի թողություն է տալիս եւ ապաշխարություն դնում, որը ջնջում է մեղքի սպիները ու հոգին առողջանում է: Ութերորդ՝ ինչպես խոր փոսն ընկած մարդը, երբ աղաղակում է, գալիս ու այնտեղից հանում են, նույնպես էլ մեղքի խորխորատն ու գուբն ընկած մեղավորը, երբ աղաղակում է, քահանան ձեռքը մեկնում ու այնտեղից հանում է: Նախապես աղաղակելը խոստովանությունն է, իսկ երբ մարդը ձեռքը պարզում է քահանա-

յին՝ թողություն խնդրելով, այն ժամանակ քահանան ներում է մեղքերը և նրան հանում փոսից: Իններորդ՝ խոստովանելով սրտի զղջումն ենք հայտնում, թե՛ մեղքն ինձ ատելի է և զղջում եմ, հնար եմ փնտրում արտասվելու, բայց քանի դեռ չենք խոստովանում, ուրեմն սիրում ենք մեղքը: Այն ժամանակ էլ քահանան աստվածային հրամանով և իր իշխանությամբ մեղքերը հեռացնում է, որոնք ատելի էին և ապաշխարություն է տալիս, որը սիրելի է մարդուն: Տասներորդ՝ մեղքերը 3 տեսակ են լինում՝ մտքով, խոսքով և գործով: Դրանք ոչնչացնում ենք այսպես. մտքի մեղքը՝ զղջմամբ, գործերինը՝ բարի գործերով, իսկ խոսքերինը՝ բերանի խոստովանությամբ, որովհետև «քո խոսքերով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես», քանի որ մեր խոսքն այնպես է լինում, որ երբեմն դատապարտում է, երբ սուտ ենք խոսում, հայիտյուն, ուրանում և այլն: Նախ արդարացնում է, երբ աղոթում ենք, դավանում Աստծուն, խոստովանում մեղքերը, բարեխոսում մարդկանց և այլն: Իսկ ո՞րն է խոստովանության օգուտը: Ասում ենք, թե շատ բաներ կան: Առաջին՝ այս աշխարհի ատյանի հակառակ պատկերն է, որովհետև ով աշխարհիկ ատյանում է խոստովանում, դատապարտվում է, ինչպես Քարմիի որդի Աբարը, երբ խոստովանեց

և իսկույն դատապարտվեց: Իսկ ով հոգևոր ատյանում է մեղքերը խոստովանում, ազատ է արձակվում, և ով չի խոստովանում, դատապարտվում է: Նա, ով այստեղ է մեղքերը խոստովանում, Քրիստոսի ատյանի առաջ նրա մեղքերը կծածկվեն, իսկ ով այստեղ մեղքը թաքցնում է քահանայից, այնտեղ՝ Աստծո հրեշտակների և մարդկանց առաջ նրա մեղքերը հայտնի կդառնան: Սա խոստովանության առաջին օգուտն է: Երկրորդ՝ հոգու վերքերն է բժշկում, ինչպես մարմնի խոցն է մարդուն դեպի մահ տանում, նույնպես էլ մեղքը հոգու և մտքի խոցն է, որը դեպի հավիտենական մահ է տանում: Ինչպես որ սպեղանին և դեղը բժշկում են խոցը, նմանապես էլ խոստովանությունը վերացնում է մեղքը և բժշկում հոգին, ըստ այն խոսքի, թե. «Ով քավություն է տալիս քո մեղքերին և բժշկում քո բոլոր ախտերը, նաև ցավերից բժշկում է միտքը և թեթևացնում ծանրությունը»: Երրորդ՝ խոստովանությունը ջնջում է մեղքերը: Ինչպես ջուրն է մարմնի ախտը լվանում, այնպես էլ խոստովանությունն ու արտասուքն են հոգին լվանում ու մեղքերը ներում, ըստ հետևյալ խոսքի. «Ասացի, թե կխոստովանեմ իմ մեղքերը և դու թողություն կտաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտությանը»:

(Հարունակելի)

Գրաբարից փոխադրեց՝

Գևորգ սարկավազ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

← 4 Հինգերորդ՝ երբ գազանի բերանն ընկած կենդանին աղաղակում է, մարդիկ գալիս են ու ազատում գազանից, այնպես էլ մեղքի մեջ ընկած մարդը ծածուկ բռնված է սատանայի բերանում, ըստ այն խոսքի, թե. «Ձեր ոտխը՝ սատանան, մռնչում է առյուծի պես, շրջում ու փնտրում է, թե ում կուլ տա», և երբ խոս-

## Ս Ա Յ Ա Թ - Ն Ո Վ Ա

← 4 Ինքը՝ Սայաթ-Նովան, այդպես էլ գրում է. «Քրսան տարուց, էշխի ընկած, լալ կը ծախեն սովորաբարին», այսինքն՝ սիրով տարված, աշուղություն են անում: «Փառք արարչին, գոյ անողին...» խաղը գրելիս Սայաթ-Նովան եղել է 28 տարեկան, բայց իր կյանքի ժամանակը հասցնում է մինչև 95-100 տարին: Երկի տեսիլքի մեջ երևացել է այն ամենը, ինչ հետո պետք է լիներ: Համենայնդեպս դեռևս կան առկա ապրած տարիներին վերաբերող փաստեր: Մեջ բերենք բանաստեղծությունը մինչև վերջ.

*Քրսանհինգում մեղան ընկած և կը լողան և կը թռչեն. երեսուներս երբ լրացավ՝ աժդահայի պես կը շոջեն. երեսունհինգ տարեկանում լավ կը գրեն, լավ կը ջնջեն. Քառասունումն ամեն ինչըս հասավ մինչ երկնուց կամարին:*

*Քառասուն և հինգից հետո լավ խաբար են քչից-չատից. Հիսուն տարին երբ բոլորեց, ամոթըն ու արն ինձ պատեց. Հիսունհինգըս երբ որ անցավ, ահուզարն էլ ինձ չազատեց. Վաթսունիս մեջ բարև տրվին մեծերն իրենց հավասարին:*

*Վաթսուն հինգից հետո արդեն «ախ ու վախ»-ըս է սկսում. Յոթանասուն տարեկանից աչքերիս լույսն է պակասում. Յոթանասուն հինգըս անցավ, նորից մանուկ են ինձ ասում. Ութսունի մեջ – փրիի տվածն անցնում է էնտի աշխարհին: Ութսուն և հինգ տարեկանից ցավը ջանիս մեջ բուն դրոցե. Ինըսունս երբ բոլորեց՝ հոգիս մարմնիցս բեզարեց. Ինըսունհինգ տարիս հասավ [Գաբրիելն անունս զրոցե]. Հարյուրի մեջ ինքըս հասա հազարանյա մեծ հայրերին:*

*Հանցավոր եմ, հողեղեն եմ, խիստ մի հիշեք ձեր ծառային.*

*Կյանքում ո՞վ է անմեղ մընում սպասեցեք Սողոմոնին...*

*Ժամանակը երբ որ հասավ, ո՞վ կը հարցնի Սայաթ-Նովին.*

*Այս աշխարհս ընդունայն է՝ անեծք մարդու էյթիբարին :*

Մեջբերված հատվածի առաջին տան մեջ 25-40 տարիքը թերևս պետք է ընկալել որպես մեկ միասություն, որպես իր վերելքի խարհրդանշան, երբ ասպարեզներում լողում էր ու թռչում, երբ աժդահայի պես ուժեղ էր, լավ իր գործն էր անում և հասել էր փառքի գագաթին:

Հաջորդ տարիների նկարագրությունն ընդունենք այնպես, ինչպես իր տեսիլքն է: Իսկ ավարտը անցավոր կյանքի իմաստության փիլիսոփայությունն է:

1742 կամ 1744 թվականից մինչև 1752 թվականը Սայաթ-Նովան արքունական երգչի փառքի մեջ էր: Պալատ, պալատական միջավայր, ուրախ հանդեսներ, ինքը այդ հանդեսների գարդը և մեծագույն ներշնչանքը՝ որն ըստ ամենայնի եղել է Թեյմուրազի դուստր և Հերակլի քույր Աննա Բատոնիչ-վիլին: Պալատական դավերը հասնում են նաև նրան, և նա վտարվում է պալատից: Այս հեռացումի տխուր, բայց հպարտ ազդականջերը լավում են «Դուն էն գլխեսն իմաստուն իս...», «Յիս կանչում եմ լալանին» խաղերի մեջ:

1754 թվականի գարնանից նա վերստին պալատում է, ուր մնում է մինչև 1759 թվականը, այդ թվականով էլ փակվում է նրա «Դավթարը»:

1751-ին վրացերեն «Աստղալուսով ծովն ինչպես կու ցամաքի...» խաղի մեջ իր մասին գրում է.

*Դուն չասիս, թե էս խիղճ սագանդարն ո՞վ ա. խոսքիս տերն իմ, հունարըս էլ զորով ա. Արուբինն իմ, ինձ կոսիս Սայաթ-Նովա. Հենց բան կոսիս, վուր ամբերուն ձեն հանի :*

Մեկ այլ առիթով իր մասին այս է ասում. «Սայաթ-Նովան իմ, ուժըն ձենիս մեջն է»: Սրանք ինքնապաշտպանական տողեր են: Իսկ իր դեմ ուղղված հալածանքի պահին էլ ո՞ւմ պետք է դիմեր բանաստեղծը, եթե ոչ երկրի տիրոջը: Այդ մտորումներն ու ներքին խռովքն արտահայտվել են վրացերեն «Արթար դատե...» և «Ձեռը վի կալ...» խաղերի մեջ.

*Արթար դատե, չէ՞ վուր թաքավուր իս դուն, Կրաստանում տեր ու գորավուր իս դուն.*

*Մեկն ինձ կոսե՝ «Գընա մաշված շուր իս դուն», Մեկն էլ կոսե՝ «մե հոտած ջըր-հուն իս դուն...»:*

*Վուչ հարսնախոս ունիս, վուչ էլ կողակից, Մեջլիսումն էլ նուր խաղք արին, ծաղրեցին. Յիս ռամիկ իմ, ինձի վուխչ-վուխչ թաղեցին. Ո՞ւմ առաջ էլ սրտիս ցավը մաղեցի, Վուխչն ինձ ասիս՝ «մե անպատիվ հյուր իս դուն» (127):*

*Ձեռը վի կալ, վաղ մարթութին չիմ ուզում. էս աշխարում փարթամութին չիմ ուզում. Վաղ բան ասիլ, յա վաղութին չիմ ուզում, Յիս մարդ մարթ իմ՝ նամարդութին չիմ ուզում... Յիս ռամիկ իմ՝ թավադութին չիմ ուզում:*

Իր վիճակին նա անդրադարձել է նաև «Իմ խիղճ զըլուխ...» վրացերեն խաղում, որի մեջ իր դժվար կյանքի երգն է երգում.

*Իմ խիղճ զըլուխ, քիզիդ էս ինչ պատահից, Վուխչ աշխարում ծաղր ու տընագ քի պատից. Ուրոր փախար, էնթի բախտըս տըս տըվից, Վիրչումն էլ տիս, թե վո՞ւնց բեղովաթ էլար:*

Կրկներգի մեջ Սայաթ-Նովան ինքն իրեն է մեղադրում. «Դե էլ յիս ո՞ւմ միղ դընիմ, ինչի՞ց էլավ. էս ամենը հենց իմ էս խիլքից էլավ»: Ինչպես ամեն մի խելքը մարդ, Սայաթ-Նովան ևս մեղքը առաջին հերթին իր մեջ է որոնում, թեև մեղավոր կարող էր լինել ամբողջ միջավայրը:

Պալատից Սայաթ-Նովայի վտարումը պայմանավորված է ոչ միայն նրա ընդհարումով վրաց թավադների հետ, այլև՝ վրաց Անտոն կաթողիկոսի, որը համակրանք է տածել կաթողիկոսների հանդեպ, այդ կապակցությամբ հեռացվել, ապա արդարացվել ու վերադարձել իր աթոռին: Ահա այս Անտոն կաթողիկոսն էլ Սայաթ-Նովային գաղափարական մեղադրանք է ներկայացրել, ինչի կապակցությամբ վերջինս գրում է. «Ուղղեցեք կրծքիս մահաբեր հրացանը, Ինձ սուֆի են կոչում. էս կորցրեցի խելքիս տոպրակը. այդ ինչպե՞ս պատահեց»:

Պալատից վտարվելուց հետո՝ Սայաթ-Նովան օժվում է քահանա և ստանում Տեր-Ստեփանոս անունը: Բարձրաշխարհիկ միջավայրին սովոր երգչին ու բանաստեղծը Ջաթաթալայի Կախի բնակավայրում դառնում է ծխական քահանա: Որտեղի՞ց ո՞ւր: Սա աբսուրդ էր, որ ծանր ու հոգեմաշ ապրումների է դատապարտում սիրող աշխարհի առջև բաց արած բանաստեղծին:

Ամուսնանում է սանահինեցի Մարմարի հետ, ունենում չորս երեխա՝ Մելիքսեթ, Օհան, Մարիամ, Սառա: Մեծ որդու՝ Մելիքսեթի ծննդյան թվականը մոտավորապես հաշվվում է 1760-ը, ինչը իր հերթին ենթադրել է տալիս, որ պալատից վտարվել և ամուսնացել է 1759-ին:

1761-ին եղել է Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի նավահանգստի հայկական եկեղեցու քահանա: 1768-ին կնոջ մահից հետո, դարձել է կուսակրոն, ստացել վարդապետի աստիճան և ծառա-

յել Հաղպատի վանքում մինչև կյանքի վերջը: Այս ընթացքում նա չի կտրվել Թիֆլիսից: Ծանր ու տխուր կյանք, որի վկայությունը իր այս տողերն են. «Հաղպատու լուսարար Սայաթ-Նովան իմ, Մե կանթեղիս վառելու ձեթ չունիս»:

Ըստ ավանդական տեսակետի՝ Սայաթ-Նովան մահացել է 1795-ին եկեղեցում ապաստանած ժողովրդի հետ մեկտեղ գոհ գնալով Թիֆլիսի վրա արշաված աղա Մահմեդ խանի հորդաներին: Կա նաև վարկած, ըստ որի՝ Սայաթ-Նովան 1801-ին մահացել է իր բնական մահով:

Սայաթ-Նովան թաղված է Թիֆլիսի Սուրբ Գևորգ եկեղեցում: 1914-ին Զ. Թունանյանի նախաձեռնությամբ նրա գերեզմանին կառուցվել է մահարձան:

Սայաթ-Նովա գրչանվան առաջին մասը գալիս է նրա Սայաթյան ազգանունից: Խաղերի մեջ իր անունը նա գրել է նաև Սայիադ Նովա, Սաիադ Նովա, Սայադ Նովա, Սայեադ Նովա ձևերով: Սայադ (թ) նշանակում է որսկան, ձկնորս, նույն (նավա), երգ, ծայն: Ըստ այսմ Սայաթ-Նովա կնշանակի՝ երգի, ծայնի որսորդ, որ համարժեք է երաժշտական սուր խողություն ունենալուն: Այսինքն՝ երգի որսորդ:

Սայաթ-Նովայի թոռ Տեր-Սովակես (1810-1883) ևս եղել է քահանա, նաև ղեկավարել է Ներսիսյան դպրոցի տպարանի ու գրատան աշխատանքները: 1848-ին իր պապի «Դավթար»-ը նա տրամադրել է Գ. Ախվերդյանին: «Դավթար»-ը ամբողջական չի եղել, պակասել են վրացական խաղերը, որոնք կորած են համարվել: Հետագայում հայտնաբերվածները եղածի չափով ամբողջացնում են նրա ծանոթությունը:

(Հարունակելի)

Դավիթ ԳԱՄԴԱՐՅԱՆ  
Բանասիրական գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր

# ՄԻՏԻԹԱՐ ԳՈՆԵՐՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԱՎԱՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵԳԻԾԸ



Միտիթար հայրապետը Կիլիկիայի Բարձրբերդ գավառի Գռներ վանքի առաջնորդն էր, որն աչքի ընկավ նաև դիվանագիտության ասպարեզում: Դեռևս 1335թ. Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Ե (1320-1342) նրան դիվանագիտական համաճարարությամբ ուղարկեց Եգիպտոսի սուլթան Մելիք-Նասրի մոտ՝ խաղաղության պայմանագիր կնքելու հույսով, որը սակայն ծանր գնով կնքվեց միայն երկու տարի հետո: Միտիթար Գռներցին կաթողիկոս ընտրվեց 1341թ.: Նա կողմ էր լատին եկեղեցու հետ մերձեցման՝ հույս ակնկալելով, որ նրա միջոցով Կիլիկյան Հայաստանը կարող է ձեռք բերել Արևմուտքի գորակցությունը: Սակայն Միտիթարը դեմ էր լատին եկեղեցու ծեսերը, դավանական բանաձևերը Հայ եկեղեցիներում գործադրելուն:

1341թ. Լևոն Ե-ի և Միտիթար Գռներցու համաճարարական նամակով Ալիյնյոն քաղաք՝ Հռոմի պապ Բենեդիկտոս ԺԲ-ի մոտ մեկնեցին ֆրանցիսկյան օրդենի անդամ Դանիել Մինորը և ասպետ Թորոս Միքայելենցը, որոնք թագավորի և կաթողիկոսի անունից օգնություն խնդրեցին: Բայց պապը հրաժարվեց օգնություն ցուցաբերել՝ իր քայլը պատճառաբանելով նրանով, որ իբր հայերը «կողմնակից են հերետիկոսներին», և որ նրանց մոտ տարածված է «կաթոլիկ եկեղեցուն հակադիր հավատո դավանությունը»: Պապը պահանջեց ներկայացնել Հայ եկեղեցու «սնդրություն» մասին մի փաստաթուղթ՝ հայտնի «լիբելլոս» (լատիներեն՝ նամակ, հայտարարություն) վերտառությամբ: Այն պարունակում էր 117 կետ, որոնց հեղինակը Ուրմիայի եպիսկոպոս, ունիթոր քարոզիչ Ներսես Պալիենցն էր: Այս ամբաստանություններին պատասխանելու համար Միտիթար Գռներցին Միս նայրաքաղաքում ժողով գումարեց, ուր կազմվեց ընդարձակ գրություն, որտեղ ներկայացվում էին Հայոց եկեղեցու վարդապետությունը, ծիսակարգը, սո-

վորությունները՝ մեկամեկ պատասխանելով 117 կետերին: Այդ գրության մեջ միտիթար կաթողիկոսը և մյուս ժողովականները ջանացել են չիրաժարվել հայադավանության սկզբունքներից, ծեսերից՝ միաժամանակ փորձելով դրանք մերձեցնել պապի պահանջած ձևերին, որպեսզի ի չիք դարձնեն հայոց եկեղեցու մասին նշված կետերում տեղ գտած հերյուրանքները: Այսպես, հայերը դատապարտում են հերետիկոսներին, միաժամանակ նշում, որ Քաղկեդոնի 451թ. ժողովի որոշումները թեև չեն ընդունվել՝ Լևոնի տոմարը նեստորականությանը համահունչ լինելու պատճառով, բայց Սսի 1307թ. և Ադանայի 1316թ. ժողովներում որոշվել է միանալ Լատին եկեղեցուն: Ի պատասխան այն մեղադրանքի, որ հայերը չեն ընդունում քավարանը որպես մեղքերի թողության, մաքրման միջոց և բոլոր մեղքերը լիովին ներված են համարում խոստովանությամբ, ժողովականները պատասխանում են, որ մեղքերի թողության համար անհրաժեշտ են համարում նաև ապաշխարությունը կամ պատիժները: Ալիյնյոնից հնչեցրած այն մեղադրանքը, թե իբր հայերը երկաբնակներին իբրև անկնունք հեթանոսների, վերստին մկրտում են, ժխտվեց հայերի կողմից՝ նշվելով, որ իրենք անգամ նեստորականներին չեն մկրտում: Պատասխանում նաև շեշտվեց, որ հայերը ընդունում են երկու բնության միավորված լինելը, բայց մերժում են երկու բնության վերաբերյալ հավատ բանաձևը: Ի պատասխան այն ամբաստանության, որ հայերն իբր գտնում են, որ Քրիստոս հարությունից հետո մարմին (մարդկային էություն) չուներ, ժողովական գրության մեջ նշվեց, որ Հայ եկեղեցին կարծում է, որ հարություն առած Փրկչի մեջ մարդկային բնությունը ոչ թե վերացել, այլ ձուլվել է աստվածայինի հետ: Ամբաստանություններից մեկն էլ այն էր, որ հայերն իրենց եկեղեցին առաքելական են համարում, իսկ հունական և լատին եկեղեցիներն այդպիսին չեն դիտում: Հայերի պատասխանում ասվում է, որ Ամենայն Հայոց եկեղեցին իրոք առաքելական է, բայց հայերն ունեն երեք տարբեր կաթողիկոսներ (այսպես կոչված Աղվանից, Աղթամարի և Սսի), որոնք նույնն են հավատով ու մկրտությամբ, թեև Սսի կաթողիկոսարանը մի քանի կետերում համաձայն է լատին եկեղեցու հետ: Վերը նշված փաստաթղթում նշվում էր նաև, որ Հակոբ Գռներցի կաթողիկոսը իրա- հանգել է պատարճը չստանալով լատին ծեսով, պահեց ու ծովը չմատչելով լատին եկեղեցու կարգով, հայ երեխաներին չսովորեցնել

լատիներեն լեզուն, չընդունել կաթոլիկ քարոզիչներին, և որ հայերը չեն ընդունում Հռոմի պապի գերակայությունը: Ժողովականները չեն հերքում այս կետը: Ամբաստանություններից մեկն էլ այն էր, որ իբր հայերը ամուսնացող զույգերին պսակում են՝ առանց հաշվի առնելու նրանց կամքը: Հայ ժողովականները հերքում են նաև սա, նշելով, որ պսակի պահին հայ քահանան հարցնում է՝ «Տե՞ր ես, որդյակս», այդպիսով հաշվի է առնում նրանց կամքը: Իսկ թե պսակվողի հայրը բռնությամբ է ամուսնացնում, պատժի է արժանանում: Ալիյնյոնից ուղարկված նշյալ փաստաթղթում ասվում էր նաև, որ իբր հայերը ներողամիտ են բազմակնության հանդեպ, և որ վաճառական հայերը, շրջելով տարբեր վայրեր, ամենուրեք կին ունեն, երբեմն նույն տեղում երկու կին են պահում: Ժողովական հայերը պատասխանում են, որ հայերի մեջ օրենքով արգելված է բազմակնությունը: Մյուս ամբաստանություններին նույնպես պատշաճ պատասխաններ են տրվում, իհարկե՝ ջանալով չսուրբել միջեկեղեցական հարաբերությունները: Իհարկե, Ալիյնյոնից հղված ամբաստանագիրը ժամանակի թելադրանքն էր: Լատին եկեղեցու երբեմնի հզորագոր առաջնորդը փաստորեն «գերության» մեջ էր, և պապությունը 1309-ից մինչև 1377թ. կորցրել էր իր քաղաքական ազդեցությունն, անգոր էր որևէ օգնություն ցույց տալ Հայաստանին: Վերը նշված փաստաթղթի նպատակն այդ անգորության սքողումն էր: Պատահական չէ, որ հետագայի կաթոլիկ հավատաբանները (Մանսի և ուրիշներ) այն անտեսում են: 1342թ. վախճանվեց Լևոն Ե թագավորը, որով հանգեց Դեբունյան տան ճրագը: Թագավորական գահին բազմեցին ֆրանսիական Լուսինյան տան ներկայացուցիչները՝ մախ Ջիվանը, ապա Գվիդոնը, որոնք, սակայն, անընդունակ գտնվեցին պաշտպանել Կիլիկիան սելջուկ-թուրքերի, թուրքմենների և Եգիպտոսի սուլթանության հարձակումներից: Ի հեճուկս Լուսինյան այս գահակալների, Միտիթար Գռներցին հակակրում էր ունիթորներին, ուստի 1342թ., լատինադավան Գվիդոն թագավորն ու Միտիթար կաթողիկոսը, Կղեմես Զ պապի դժգոհությունը փարատելու նպատակով նոր պատվիրակություն առաքեցին նրա մոտ՝ Ալիյնյոն: Պատվիրակությունը պապի համաճարարականով ներկայացավ Ֆրանսիայի Ֆիլիպ Զ արքային՝ օգնություն խնդրելու: Սակայն վերջինս մխրձված էր Եվրոպայում 1337-ից ծագած հարյուրամյա պատերազմի բոցերի մեջ, ուստի հրաժարվեց

նոր խաչակրաց պատերազմ ձեռնարկելուց: Դրանով իսկ հորս ցնդեցին նոր խաչակրաց արշավանք հարուցելու, կիլիկիահայրությանը գորակցելու Կղեմես Զ պապի ծրագրերը: Ստեղծված օրհասական պայմաններում Գվիդոն Լուսինյանի լատինամետ ուղեգծից դժգոհ հայ իշխանները 1345թ. սպանեցին նրան: Դա հարուցեց պապի դժգոհությունը: Վերջինս նորից առաջադրեց երկու եկեղեցիների ունիթայի խնդիրն իբրև պարտադիր պայման հայերին իր կողմից ցուցաբերելիք օգնության: Գվիդոնին հաջորդած Կոստանդին Դ հայազարմ թագավորը (1345-1363թթ.) և Միտիթար կաթողիկոսը, ելնելով Կիլիկիայի ծանր կացությունից, ստիպված եղան ընդառաջել Կղեմես Զ պապի պահանջներին և դիմել կանոնական որոշ զիջումների, իհարկե՝ պահպանելով Հայ Առաքելադրոշմ եկեղեցու ծեսերն ու սովորությունները: Կաթողիկոսությունը ընդունելու վերաբերյալ Հայոց թագավորի և Միտիթար կաթողիկոսի հնչեցրած դրական հավաստիացումները առերևույթ էին ու բանավոր՝ նպատակ ունենալով չխանգարել Արևմուտքի հնարավոր գորակցության իրականացմանը: 1345թ. Միսում հրավիրված ժողովում հայերն առերես ընդունեցին լատինադավանությունը՝ հույս ակնկալելով այդ կերպ արագացնել Եվրոպայի գորակցությունը օրհասի մատնված Կիլիկիայի Հայոց պետությանը: Բայց ոչ մի օգնություն չստացվեց, իսկ հաջորդ տարի Կիլիկիան ենթարկվեց սելջուկ-թուրքերի, Եգիպտոսի մամլուքների և թուրքմենների համակցված հարձակումներին: Կիլիկյան Հայաստանի կացությունը օրհասական էր նաև հաջորդ տարիներին: 1347թ. Եգիպտական գործը գրավեց Այաս քաղաքը: Նոր խաչակրաց արշավանք ձեռնարկելու Կղեմես Զ պապի փորձերն արդյունք չտվեցին: 1348թ. Եվրոպան համակած ժամտախտը թափանցեց նաև Կիլիկիա: Կղեմես պապը Միտիթար Գռներցուն խոստացավ ամեն տարի ուղարկել Կիլիկիա 12 հազար ֆլորինի չափ գումար (ոսկով) և 1000 հեծյալ, եթե, իհարկե, հայերը համաձայնեին եկեղեցական միությանը: Բայց միությունը չկայացավ, ուստի խոստացված օգնությունը չիրականացավ: Միտիթար կաթողիկոսը մինչև կյանքի վերջը մնաց հավատարիմ հայրենավանդ հավատքին: Նա վախճանվեց 1355թ., 14 տարի գահակալելուց հետո:

**Վրեժ ՎԱՐՈՒՆՅԱՆ**  
**Պատմական գիտ. դոկտոր**

## ԳԵՂԵՑԻԿԻ ՈՒ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՐԳԻՉ-ՎԱՐՂԱՊԵՏՈՒ

«Մշակույթը, այս նկարչին մեջ, կը մաղուի նրբորեն, առանց տեղիք տալու զուտ մտաւորական փորձութիւններու, փրկելով ուժմութիւնը իր գծագրական «տարրերուն», որ ի վերջոյ ամբողջութիւն մը կը կազմեն իր ինքնութեան հետ: Իր վրձինը, այնքան հին է, որքան նոր, իր Ազգին նման, այնքան խորհրդանշական է, որքան սուզուող կեանքին մեջ. գոյութեան փառքը երգելու կերպ մըն է, ուրպիտութիւնը փնտրելու և անոր իմաստ մը տալու: Կարելի է, ուրեմն խօսիլ բանաստեղծութեան մը մասին, որ չի կորսուիր ընդհանրականին մեջ, այլ ունի «բան» մը, որ կգերազանցէ պատահականը և կը զգացնէ բացարձակին հայունը»,- այսպես է բնորոշել իտալացի արվեստաբան Մարիո Ստեֆանին 33 նկարչիչների միության անդամ, բազմաթիվ պարզների արժանացած, Միտիթարյան Միաբանության կառավարի վարիչ Հարություն Վարդապետ Պատիկյանին: Վերջերս երևանում՝ Ռուսաստանի մշակույթի տանը բացվեց նրա անհատական ցուցահանդեսը, որում ընդգրկված էին մի քանի տասնյակ գեղանկարներ: Դրանցից յուրաքանչյուրը մի դուռ է նրա հոգու ծալքերը թափանցելու, հոգևորականի կերպարը բացահայտելու համար: Առաջին բանը, որ ձգում է այցելուին,

աբստրակտ ոճին հատուկ գծերն ու պատկերներն են, որոնք տաք և սառը գույների երկխոսության շնորհիվ ձեռք են բերում դյուբելու և մտորումների մղելու կարողություն: Թվում է՝ երաժշտություն են լսում: Լինելով մեր ժամանակների կրթյալ ու լուսավոր անձանցից մեկը՝ իր կտավներում ներդնում է որքան ազգային, նույնքան էլ համամարդկային մտածողություն: Նա մտահոգված է ապագային նետված մարտահրավերներով: Եվ այս գորշ իրականության մեջ անգամ կարողանում է գտնել լույսի մի շող, նկատել ու մեծարել Գեղեցիկը: Հավատացած է, որ հաղթանակելու են ամենաբարձր իղեպաները: Հենց այս բախումներից էլ ծնվում է նրա արվեստի ինքնատիպությունը: Ուշագրավ է, որ Հարություն Վարդապետ Պատիկյանի նկարների «հերոս» հաճախ դառնում է կինը, որը երբեմն հանդես է գալիս մերկ բնորոշուկ կերպարով: Շատերին երկի անհավանական կթվա, որ հոգևորականը կարող է այսպիսի սեր ու ակնածանք տածել կնոջ նկատմամբ, բայց արվեստագետի իսկական էությունը դրսևորվել է նաև այստեղ. «Ես կը նկարեմ ոչ թե բնութեան հրաշալիքները, այլ բնութեան պարզեցումը»,-ասում է նա: Հավանաբար այդ պարզեցումը մարդու հոգու գեղեցկություններն


են, որոնք կարող են և ներդաշնակ լինել մարմնի գեղեցկությանը. տվյալ դեպքում դա արտահայտվել է կանանց միջոցով՝ յուրաքանչյուրը իրեն հատուկ ներքին ճկունությամբ: Մի առանձնահատկություն էլ կտավներից ոչ մեկը վերնագիր չունի, ինչին շատ տարիներ առաջ հեղինակը հետևյալ բացատրությունն է տվել. «Վերնագիր չեն դներ, որպեսզի իւրաքանչիւր մայրը իր ուզածը տեսնէ, իր ուզած պահուն իր ուզած զգացումները ունենայ պատասխաններու շարժումներուն և գույներուն մէջ»: Ահա այսպիսի անանուն կտավներից մեկի առաջ ենք. սև վանդակաճաղեր ինչեցնող գծերի ետևում պատկերված է կարմիր հրե գունդ... Բազմաշերտ ստեղծագործությունը միտքը տանում է միաժամանակ երկու ուղղությամբ. սկզբում այն կարող է ընկալվել որպես երկիր մոլորակի խորհրդանշիչ (ուր Աստված մարդուն ստեղծեց իր նմանությամբ), որն այսօր վերածվել է պատերազմների թատերաբեմի: Մեկ այլ դեպքում դա կարող է լինել լուսավոր ու բարձր գաղափարը, որի առաջ փակ են խավարասերների հոգիները: Ի հակադրություն սրա՝ մեկ այլ կտավում արևածագի տեսարանն է ու վազող ծիւրը. ասես ցանկացել է գովերգել ազատության համար մարտնչողներին: Շարունակելով մեր շրջայցը՝ նկատում ենք, որ նկարիչը առաջ է տանում մի կարևոր սկզբունք՝ անձերի և պատկերների միջոցով հոգեվիճակների բացահայտումը՝ հաղորդելով հարուստ զգացմունքներ: Ինչ թեմա էլ որ արժարծելիս լինի

բնության պարզների երգիչը, միևնույն է, նրա աշխատանքները շնչում են հայերեն. Հարություն Վարդապետ Պատիկյանը որոնում ու գտնում է այն «հարմար պահը», երբ կարելի է հայ ճարտարապետության ու քանդակագործության մի փորձիկ դեսուպ կիրառել, որով հպարտորեն մատնում է իր ազգային ինքնությունը: Թերթելով բարձրաստիճան հոգևորականի կյանքի գիրքը՝ տեսնում ենք, որ սա նկատել են նաև օտարները. «Անօգուտ է ոգեկոչել դպրոցներու անուններ, ... իզմեր, Պատիկեան իր կախարակական գործողութիւններուն մէջ հայկական հին բաղադրութիւններ կը ներմուծէ, Ռավեննեան խճանկարներուն լուսաւոր և գունագեղ բեկորներ, աւետար Հայ եկեղեցիներու, Կորսուած Դրախտին ճշդներ, որոնք կ'ապրին սփիւռքացած ժողովուրդի մը անմար յիշողութեան մէջ»,-աս ասում է ֆրանսիացի արվեստաբան Մոնիք Մարին:

**Համիկ ՊՈՐՈՍՅԱՆ**



# ԴՐՎԱԳՆԵՐ ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ



Ա. Թադեի վանք 6-9 դդ., Պարսկաստան

Երջերս Անանիա Շիրակացու անվան միջազգային հարաբերությունների համալսարանը գրքերի մի ծանրոց ստացավ ԱՄՆ-ից, այդ թվում՝ գրող և Կալիֆորնիայում ճանաչված հասարակական գործիչներ Բաբկեն և Սեդա Պալյան Տեր Յակոբյան ամուսինների գրած «Իրանահայերի պատմությունը» գիրքը:

Երջերս ասած այդ գիրքը մեզ համար նորություն էր և որոշեցինք մեր ընթերցողներին համառոտակի ներկայացնել դրա բովանդակությունը և մի քանի խոսք ասել հեղինակի մասին:

Պալյան Տեր Յակոբյանը ծնվել է 1919 թվականի հունվարի 25-ին Պարսկաստանի Երբեմնի մայրաքաղաք Թավրիզում: Սովորել է Թավրիզի ծխական երկսեռ դպրոցում, թեմական միջնակարգ դպրոցում և Թեհրանի Պետական միջնակարգ դպրոցներում: 1960-ին ավարտել է Պետական Համալսարանի լեզվաբանական մասնաճյուղը:

Թեհրանում նա հոգևածներ է գրել և թարգմանություններ կատարել անգլերենից, ֆրանսերենից և պարսկերենից, որոնք տպագրվել են «Ալիք», «Արմենուհի», «Ցախապել», «Վերածնունդ» պարբերականներում:

1980 թ.-ին այդ ու կին մշտական բնակության մեկնեցին ԱՄՆ իրենց երկու դստերի հետ միասին:

1985-ին ամուսինները լույս են ընծայում իրենց անդրամիկ հայերեն պատկերազարդ գիրքը՝ «Պատմություն իրանահայերի» 320 էջ, 500 տպաքանակով, որից 200 օրինակ էլ նվիրվեց Սփյուռքի և ԱՄՆ-ի բոլոր հայկական դպրոցներին, գրադարաններին, գրող-մտավորականներին ու հոգևորականներին:

1994 - 2001 թվականն ամուսինները գրեցին նաև անգլերեն հոդվածներ ու բանաստեղծություններ, որոնք տպագրվեցին «The International Library

of Poetry - MD» և «Famous Poets Society» պարբերականներում:

1988-ի հունիսին Սեդայի հեղինակությամբ և Բաբկենի խմբագրությամբ լույս տեսավ իրենց երկրորդ գիրքը՝ «Կանացի 3-րդ Աշխարհամասից» խորագրով (243 մեծադիր էջեր), որտեղ ուսումնասիրվել էին 3-րդ աշխարհամասում գտնվող 10 երկրների կանանց կենցաղն ու իրավիճակը, որ մեծ արծազանք գտավ մշակութային հանրության խավերում, արժանանալով գնահատանքի և գովասանքի:

1988-ի դեկտեմբերին, Հայաստանի երկրաշարժի մեծ աղետից ազդված նրանք մտածեցին օգնել հայ ազգի որբերին, որոշեցին գիրք գրել և ողջ հասույթը հատկացնել ծնողազուրկ երեխաների ֆոնդին: Այսպիսով լույս տեսավ «Հինավուրց Յեթիաթներ» մանկական պատկերազարդ գիրքը, որից ձեռք բերված շոշափելի հասույթն էլ ծառայեց նախատեսված նպատակին:

1996-ին լույս տեսավ Պալյան Տեր Յակոբյան ամուսինների 4-րդ գիրքը (պատկերազարդ) «Գարնամային գեփյուռներ և աշնանային տերևաթափ» վերնագրով:

Պարսկաստանի երկար դարերի իրադարձություններին առընթեր հեղինակները մեղմաջան աշխատանքով զուգահեռաբար շարադրել են իրանահայ գաղութի պատմությունը՝ իր բոլոր քաղաքական և համընկերային ծայրերով ու ելևէջներով: Սեդա և Բաբկեն Պալյան Տեր Յակոբյաններն իրոք դժվարություններ հարթահարելով են հասել իրենց նպատակներին: Հակառակ այն կարծիքներին, թե հայերը Պարսկաստան են քշվել Շահ Աբասի օրոք՝ 1605 թ. գրքի հեղինակները, վկայակոչելով սկզբնաղբյուրներ, փաստում են, որ քրիստոնեությունից մի քանի դար առաջ՝ հայեր էին ապրել Իրանում,

մասնավորապես Ատրպատականում (Թավրիզ Ուրմիր), իսկ Շահ Աբասը մինչև իր մահը մի քանի անգամ Թավրիզից ու այլ բնակավայրերից հայերին բռնի տարել է այդ նոր մայրաքաղաքը, որպեսզի նրանք, որ բազմարվեստ էին (վաճառական, երկաթագործ, ոսկերիչ, արծաթագործ, ներկարար, ճարտարապետ, նկարիչ), ծաղկեցնեն, զարգացնեն Պարսկաստանի թագավորների մայրաքաղաքը:

1620 թ. հաջատուր Կեսարացին հիմնեց միջին արևելքի առաջին տպարանը (1638-ին այդ տպարանում է տպագրվել «Սաղմոսը», որի պահպանված միակ օրինակը պահվում է Անգլիայի Օքսֆորդի գրադարանում):

«Իրանահայերի պատմության» գրքում առանձին զուլխներ նվիրված են իրանահայ դպրոցներին, բարեգործական, մարզական միություններին և ընկերություններին, իրանահայ հոգևորականներին ու հայ եկեղեցուն, Պարսկաստանի տարբեր ժամանակաշրջանի մայրաքաղաքներին, փոքր ու մեծ քաղաքներին, ուր հնուց ի վեր ապրել են հայերը՝ նպաստելով այդ երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային առաջընթացին, Իրանում քաղաքական գործունեություն ծավալած և պետական շինարարությանը գործուն մասնակցած հայորդիներից մի քանիսին: Պարսկաստանի հայորդի, առաջին վարչապետ Միրզա Մեթրն խանը քաղաքական և պետական ակնառու գործունեության համար արժանացել է բազմաթիվ շքանշանների ու բարձրագույն պարգևների: Անցյալի անվանի և ակնառու հայ քաղաքագետներից են եղել Հովհաննես խան Աքշայյանը, Սեթ խան Աստվածատուրը, Դավիթ խան Դավիթյանը, զորապետ Ջոհրաբ խան Ամիր Թոփխաննեն, Հովհաննես խան Մասեխյանը: Իրանի պատմության մեջ կարևորագույն իրադարձությունը եղել է սահմանադրական շարժումը՝ պարսկական առաջին հեղափոխությունը, որի ընթացքում հայերը վճռական դեր են խաղացել. հաստատվեց ժամանակակից ամերիկացի փորձագետ Շոատերի այն համոզումը, թե միայն հայորդի էփրեմը՝ Պարսկաստանի Գառիբալդին, կարող է փրկել Սահմանադրությունը վերահաս վտանգից:

Իսկ տիկին Սեդա Պալյան Տեր Յակոբյանի «Գարնամային գեփյուռներ և աշնանային տերևաթափ» ավելի ուշ լույս տեսած ծավալուն ժողովածույուն ընդգրկվել են հիմնականում «Վերելք» ամսագրի և «Նոր կյանք» (Կալիֆորնիա) շաբաթաթերթում լույս տեսած հոգեբանական ուսումնասիրությունները, խրատական պատմվածքները, խորհրդածությունները, արձակ և չափածո երկերը:

Պատրաստեց՝  
Սարգիս ԺԱՄԿՈՅԱՆԸ

# ԼՈՒՐԵՐ ԱՐՏԵՐԿՐԻՑ

## ԴԱԼԱՅ-ԼԱՍԱՆ ԱՌԱՋԱՐԿԵԼ Է ՍԻՆԹԵԶԵԼ ԲՈՒԴՊԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Նա կոչ է արել ռուս գիտնականներին մասնակցել այդ գործընթացին: Ռուս գիտնականները կարող են իրենց ավանդը բերել գիտության և բուդդայականության սինթեզին: Այդ մասին Դալայ-Լամա XIV-ը հայտարարել է Հնդկաստանի Դհարանսալ քաղաքում տեղի ունեցած Ռուսաստանի և Մոնղոլիայի բուդդայական մշակույթի փառատոնի ժամանակ իրավիճակում մամլո ասուլիսի ընթացքում:

Նրա խոսքերով՝ գնալով ավելի շատ գիտնականներ են հետաքրքրություն դրսևորում նման սինթեզի ոլորտում ուսումնասիրությունների անցկացման նկատմամբ:

«Մոտավորապես 20 տարի առաջ իմ նախածեռնությամբ սկսեցին անցկացվել հանդիպումներ արդի գիտության և բուդդայականության ներկայացուցիչների միջև: Վերջնական արդյունքում ծնվեց «Միտք և կյանք» ինստիտուտը, որը զբաղվում է նման միջոցառումների և ուսումնասիրությունների կազմակերպմամբ», - ասել է Դալայ-Լաման: Նրա խոսքերով՝ այդ աշխատանքի ընթացքում «Միանգամայն ակնհայտ դարձավ, որ արդի գիտությունն այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են քվանտային ֆիզիկան և այլ ճյուղեր, շատ զարգացած է, և բուդդայականությունը սովորելու բան ունի»:

Սակայն մյուս կողմից՝ Դալայ-Լաման գտնում է. «Երբ խոսում ենք ներքին կարգի բաների, գիտակցության, մտքի, խելքի, զգացմունքների գործունեության մասին, ապա այստեղ արդի գիտության ուսումնասիրությունները դեռևս անկատար են, այդ առումով գիտությունը շատ երիտասարդ է»:

«Այդ իմաստով Հնդկաստանի և բուդդայականության հին փիլիսոփայական միտքը զգալիորեն առաջ է արդի գիտությունից: Եթե կարողանանք համատեղել այն, ինչ գիտեն արդի գիտությունն ու բուդդայականությունը, իրոք ընդհանուր պատկեր կստանանք», - ընդգծել է նա:

Ինչպես նշել է բուդդայականների հոգևոր առաջնորդը, «Գիտնականներն ուզում են որոշել, թե մտքի և գիտակցության մարդուն ինչպես թույլ կտա կրճատել սթրեսը, արյան ճնշման մակարդակը՝ այդպիսով մարդուն դարձնելով առավել հանգիստ և կայուն»: Նա ավելացրել է, որ մասնավորապես, ԱՄՆ-ում 3 մեծ համալսարաններ կատարում են նմանատիպ ուսումնասիրություններ:

Ըստ «Ինտերֆաքս-Ռեյդիո»-ի

## ՄԻՆԱՅԻՆ ԳՈՐԲԱԶՈՎԸ ՀԱՎԱՆԱԲԱՐ ԿԻՆՈՒՊԻ ԴԱԼԱՅ-ԼԱՍԱՆԻ ՀԵՏ

ԽՆՅՄ նախիսին նախագահ Միխայիլ Գորբաչովի և Դալայ-Լամա XIV-ի հանդիպումը Հռոմում շատ հավանական է, թեև այդ մասին դեռևս ոչ մի նախնական պայմանավորվածություն չկա:

Միխայիլ Սերգեևիչն անպայման ներկա կլինի աղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիրների հանդիպմանը Հռոմում, առավել ևս, որ նա, ինչպես նաև Հռոմի քաղաքապետն, այդ ֆորումի համանախագահներ են: Ուստի, եթե այնտեղ մեկնի նաև Դալայ-Լաման, ապա նրանց հանդիպումը և շփույթը բացարձակապես իրական են: Նախօրեին Հնդկաստանի Դհարանսալ քաղաքի իր մտավայրում տեղի ունեցած մամլո ասուլիսի ընթացքում Դալայ-Լաման հայտարարել էր, որ մեկնելու է Հռոմ և շատ է սպասում Մ. Գորբաչովի հետ հանդիպմանը: «Մենք դարձել ենք բավական մոտ բարեկամներ, նա շատ հաճելի և լավ մարդ է», - ասել է Դալայ-Լաման:

Ըստ «Ինտերֆաքս-Ռեյդիո»-ի

## ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՍՏՎԱՇԱՇՆԶԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Դրանից դժգոհ են անգամ ֆեմինիստները: Գերմաներեն Աստվածաշունչը, որում խիստ ընդգծվում է սեռերի հավասարությունը, լույս ընծայման պահից արդեն մի ամբողջ տարի քննարկում է առաջացրել հասարակության մեջ:

«Հայր մեր» աղոթքի փոխարեն նոր Աստվածաշունչում ասվում է՝ «Մեր երկնային Մայր և Հայր», իսկ ինքը՝ Հիսուս՝ արդեն ոչ թե «Որդի» է, այլ «Ձավակ Աստծո»:

Նոր թարգմանության մեջ հիշատակվում են կին-րաբբիներ, թեև հին հրեաների մոտ այդպիսիք չկային, և անգամ ազատամիտ հրեաների մոտ նրանք ի հայտ են եկել միայն 20-րդ դարի 70-ական թվականներին:

Անգամ ֆեմինիստներն տրամադրված կաթոլիկ աստվածաբանները հավանություն չեն տալիս Աստվածաշունչի նոր տարբերակին: Կաթոլիկ ֆեմինիստուհի Հելեն Շուկեթ-Շուրմանը գտնում է, որ իմաստի ըմբռնման համար կարևոր է պատկերացնել աստվածաշունչային ժամանակների նախապետական հասարակությունը:

Ըստ «Սեդիցա.Ռու»-ի

Ըստ ԱՂԹ-ի «Ձվարթնոց» կենտրոնի  
Թարգմանությունը՝  
Լարիսա ՆԱԿԱՍՐԴՅԱՆԻ

# Ս.ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՂԵՑՈՒ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՀԱՄԵՐԳԸ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՏՈՒԹՅԱՆ ՏԱՆԸ

Կերջերս Կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ Հարավ-արևմտյան թաղամասի Ս.Երրորդություն եկեղեցու երկսեռ քառաձայն երգչախմբի համերգը: Համերգն սկսվեց տերունական աղոթքով: Համերգի առաջին բաժնում երգչախումբը կատարեց Մ.Խորենացու, և Շնորհալու, Կոմիտաս Աղցեցու, Ա.Ջորափորեցու, Հակոբ Կլայեցու և այլոց հոգեգնալ շարականներից, որոնք մշակվել է երգչախմբի անդամ, կոմիտասի անվան կոմսերվատորիայի դասախոս Դավիթ Պողոսյանը: Նա շուրջ 40 շարական է փոխադրել երկսեռ երգչախմբի համար:

Համերգի երկրորդ բաժնում երգչախումբը կատարեց Կոմիտաս վարդապետի հարսանեկան երգերի շարքից, պարերգերից, Կարա-Մուրզայի ժողովրդական երգերի շարքից: Երգչախումբը հոգեգնալ շարականների և ժողովրդական խմբերգերի հրաշալի կատարմամբ հիացրեց ներկաներին: Համերգին ներկա էին արվեստի և մշակույթի գործիչներ, հոգևորականներ, օտարերկրյա հյուրեր: Խմբավար Անուշ Հարությունյանի խոսքով՝ համերգը նպատակ ուներ հասարակության լայն շերտերին հաղորդ դարձնել մեր հոգևոր արժեքները: